

ՆՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

§ 6

ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՆՈՒՏԻՐՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀԻԿ ԵՒ ՀՈԳԵՒՈՐ ՏԱՐՐԵՐԸ

Հարցասիրութեան առարկայ եղող առարկային վերաբերեալ աղբիւրների տւած նիւթերի հետազոտութեան միջոցով մենք փորձեցինք հաստատել, որ Արիական տանուտիրութեան հիմնական էլիմենտները կազմում են և հիմը հայկական տանուտիրութեան:

Հայ ժողովրդի ամբողջ կեանքն իր բոլոր երևոյթներով դեռ այժմ էլ հոգևոր-կրօնական սովորոյթների հետ է կապւած. վերջրէք տան հիմնումը, պսակը, ծնունդը, ժառանգութեան բաժանումը, երգումը, վար ու ցանքսը, որևէ նոր ձեռնարկութիւն ըսկսելն, և այլն և այլն: Հոգևոր-կրօնական այդ սովորոյթները վերաբերում են նրա ոչ միայն անձնական-անհատական կեանքին, ոչ միայն ամեն մի առանձին մարդու մասնաւոր ընտանեկան կեանքին, այլ նաև հասարակական-համայնական կեանքին: Վերջնեք օրինակ զոհաբերութիւնները պսակի ժամանակ, ամենօրեայ զոհը տան սեղանի առաջ, ննջեցեալների հոգւոյ հացը, որ ոչ այլ ինչ է, քան մի զոհաբերութիւն ննջեցեալի և ապա տան նախնիքների համար, հասարակական մատաղը Զատիկն և այլն: Այստեղ առանձնապէս յիշելու արժանի է հրապարակական-հասարակական զոհաբերութիւնն ու արքայական կրակարանի կպցնելը Նաւասարդին, հայկական այդ նոր տարուն (այժմեան հաշուով օգոստոսի 11) երբ հասած են լինում Հայաստանի ամենատեսակ հացահատիկներն ու պտուղները: Յիշենք նաև ամենայն տարի փետրուարի լոյս 14-ի երեկոյեան կատարւող հրավառութիւնը, որ համատարած է ամբողջ Հայաստանում: Դա հռչակաւոր զընդէզն է: Քրիստոնէութեան ժամանակ նրա տաճար տարւելու հետ կապւած այդ տօնը, դժւար չէ ասել, որ հեթանոսական է: Մինչև այժմ էլ մնացել է մեր Մաշտոցների մէջ Վերով (կրակով) շրջելու սովորութեան արգելքը: Հաւանօրէն հին ժամանակներում այդ տօնը կատարւում էր զարնանամոխն, իսկ հրավառութիւնը հասարակական զոհաբերութեան համար էր. իսկ Մաշտոցի Վերով շրջելը՝ պէտք է կապել մի այլ սովորութեան հետ: Թւի թէ զարնան զալու ուրախաբեր տօնը հրապարակական-հասարակական զոհաբերութեամբ տօնելիս վառւում էր համայնական կրակարանի կրակը, որից և համայնքի իւրաքանչիւր տանուտէր վերցնում և

տանում էր մի բոցավառող ճիւղ իր սեփական կրակարանը կրպ-
ցներու և իր տան սրբազան կրակը վերանորոգելու: Հրապարա-
կական այդ հրավառութեան հետ կապում էին նաև գուշակու-
թիւններ, յատկապէս նրա ծուխի վեր բարձրանալու և տարած-
ւելու եղանակները, դիտելու միջոցով, Հին այդ սովորութեան և
կրօնական արարողութեան հետքերը մենք գտնում ենք դեռ այ-
սօր էլ հայկական շատ գաւառներում: Շիրակի գիւղերում, օրի-
նակ, հրավառութեան ծուխը բարձրանալիս դէպի որ կողմը որ
տարածւեց՝ այն կողմի գիւղի հանդերը ընթացիկ տարում լաւ, ա-
ռատ բերք կունենան: Շատերը հրավառող երկար փայտի ձողեր
վերցնում հանգցնում և տանում են հաւնոցը թառ շինում, որ-
պէս զի հաւերն առատ հաւկիթ ածեն. ու այսպէս զանազան սո-
վորութիւններ և նախապաշարմունքներ, որոնք հնութեան մեծ
կնիք են կրում իրենց վրայ: Եթէ նաւասարդի տօնը բերքն ըս-
տանալու համար կատարւող հրապարակական տօնն է, զարնա-
նամտի այդ տօնը ցանքսի, այգիների բացւելու ու մշակման, և
այլն առթիւ կատարւող տօնն ու առատ բերք ուղարկող աստ-
ւածներին զոհաբերութիւններ անելու օրն է:

Գարնանամուտը հրավառութեամբ և մեծ հանդիսով տօնե-
լու սովորութիւնը շատ հին է. դա գտնում ենք արիական բոլոր
ազգերի մօտ. զրա մնացորդները դեռ կան այսօր էլ, օրինակ
Ջուիցերիայում (Sechseleute կոչւած զարնանամտի տօնը):

Բացի այդ, առանձին ուշադրութեան արժանի են ժողովրդ-
դական խմբովի ուխտագնացութիւններն, իրենց անմիջապէս յա-
ջորդող զոհաբերութիւններով, Հայաստանի զանազան ուխտատե-
ղիներն ու ուխտագնացութիւնները, որ ամենայն տարի տեղի են
ունենում յայտնի օրերում ու մեծ հանդիսաւորութեամբ: Համա-
ժողովրդական վիճակախաղը Համարձմանը, իրեն ուղեկցող ջան
գիւղումներով, որ ծաղկանց և կուսութեան տօնն է միաժամանակ:
Այդպիսի համայնական ընդհանուր տօներ շատ են եղել հին հա-
յերի մօտ: Արտաշէսի հառաչանքով յիշած «ծխանի ծուխն ու նա-
ւասարդի առաւօտն» արդէն յիշեցինք. այստեղ առաջ բերենք
պատմական նաև մի այլ յիշատակութիւն նաւասարդի համայնա-
կան տօն լինելու մասին. — «...Վաղարշ տօն աշխարհախումբ կար-
գեաց 'ի սկզբան ամի նորոյ, 'ի մուտն նաւասարդի»։ Մովսէս
Խոր. II. 66. երես. 146.

Վերջապէս ամենայն տարի սեպտեմբերին (12—18-ի մէջ
ընկած մի կիրակի առաւօտ) Խաչի տօնին անւող զոհաբերութիւ-
նը: Ջոհի կենդանին է սովորաբար մի ուլ կամ այծ. այս զոհա-
բերութիւնը նւիրւած է ննջեցեալների յիշատակին: Ուլի կամ

այժի զոհաբերութիւնը հանդիպում ենք մենք արեական շատ ազգերի մօտ:

1. Հայկական տանուտէրն իր իրաւունքներն ու պարտաւորութիւններն իրր ամուսին և հայր, ինչպէս տեսանք, կիրաւուում է ոչ այլ կերպ, քան իր կնոջ և իր տան տիրունու ընկերակցութեամբ, իսկ երբ հափաճաւ որդիք կան, հայրական-ծնողական իշխանութիւնը գործում է առ երեւոյթաւ իրր հայր և՛ ամուսին, նրա իշխանութիւնը տարածւում է ամբողջ ընտանիքի վրայ. ընտանիքի մէջ նա բարձրագոյն դատաւորն է և վճռահատողը. իսկ իր որդոց նկատմամբ նա սաստող և պատժող իրաւունք ունի. բայց այդ իրաւունքը չի հասել և չի հասնում հռոմէական patria potestas-ին. լինելով դատաւոր իր որդոց վրայ, հայ հայրը կեանքի և մահուան դատավճիռ արձակելու իրաւունք չի ունեցել: Հայրըն ու ծնողն, ասել է, հայ ընտանիքի մէջ և՛ վարչապետ է և՛ դատաւոր: Բայց որովհետեւ նա և իր կինը տունը կառավարում են ըստ իրենց հայեցողութեան, ընդհանուր ցեղական իրաւունքի նորմերի սահմանում նոքա նաև նոր կարգեր են մտցնում տան բարեօք կառավարելու համար, ուստի և նոքա, իրենց գործառնութեան շրջանում են նաև օրէնսդիր: Սրանից պարզ է, որքան և մենք համառօտ անցանք, մի ընտանիքի մէջ կարելի է ուրաւագոյն այն երեք խոշոր գծերը, որ անհրաժեշտ են մի պետութեան կազմակերպ գոյութեան և յարատեւելու համար, այն է՝ օրէնսդիր իշխանութիւն, գատող իշխանութիւն և գործադիր (վարչական, կառավարող) իշխանութիւն:

Մի ընտանիքի հայրը, սակայն, է նաև համայնքի անդամ. իրր այդպիսին, նա մասնակցում է հասարակական կեանքին և գործերին. նա ընտանիքի ներկայացուցիչն է այդ համայնքի մէջ, իրր այդպիսին նա անդամն այդ համայնքպետութեան: Իսկ պետութիւնը գումարն է այդ համայնքպետութիւնների: Ինչպէս որ իւրաքանչիւր ընտանիքի մէջ հօր և ամուսնու գլխաւորութեամբ նրա կինն ու որդիքն ու ամբողջ տունն ու տեղը կազմում են մի ամբողջութեան մէջ պարփակուած մի միութիւն, ու այդ բոլորը միասին կազմելով մի տանուտիրութիւն (Haushaltertum), այնպէս և մի համայնք, իրր գումարը մասնաւոր տանուտիրութիւնների, կազմում է մի համայնական տանուտիրութիւն՝ համայնքի ընտրած տանուտէրի գլխաւորութեամբ: Առանձնակի այդ համայնքների գումարը կազմում է մի զաւառ կամ նահանգ: Այստեղ առաջ է գալիս հայկական նախարարութիւնը, որ ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի փոքր նահանգպետութիւն՝ ցեղական նախարարի զբլխաւորութեամբ, ուր իշխող տունը և՛ օրէնսդիր է, և՛ դատաւոր և՛

պետ-իշխան։ Այսպէս վերցրած, նախարարութիւնը մի տանուտիրութիւն է պետական բոլոր ֆունկցիաներով։

Նախարարութիւնները ցեղական փոքր իշխանութիւններ են. մի երկիր կարող է կազմւած լինել, ինչպէս մեղանում, բազմաթիւ մանր ցեղական իշխանութիւններից։ Բայց մի ժողովուրդ իբր մի ամբողջութիւն պետականութեան գաղափարին հասած կարող է լինել միայն այն ժամանակ, երբ այդ մանր իրարից բաժանուած ցեղական իշխանութիւնները կրմիանան իրար հետ՝ մի ամբողջութիւն կազմելու համար։ Այստեղ արդէն մենք կանգնած ենք պետութիւն կազմելու հանգամանքի առաջ։ Թէ ինչպէս է կազմուել հայկական հին պետութիւնը, թէ ինչպէս են մանր ցեղապետները մի պետի ու թագաւորի գլխաւորութիւնը ճանաչել, դա այստեղ հարցաւիրութեան նիւթ չի կարող լինել. մեզ հետաքրքրողն այստեղ այն է, թէ արդե՞ծք հայ ժողովուրդը պետականութեան այդ բարձր գաղափարին հասել է, թէ ոչ։ Պատմական փաստերն ասում են, որ այն։ Այսպէս հետեողաբար դատելով, թագաւորութիւնը, կամ ընդհանուր առմամբ ասենք, պետութիւնը տանուտիրութեան զարգացման ամենաբարձր աստիճանն է, այսինքն նա էլ իր հերթում մի տանուտիրութիւն է։ Իբր ապացոյց առաջ բերենք մի շարք քաղաժքներ հայ պատմագրից և ապա անենք մի քանի կարճ խորհրդածութիւններ։

ա. Վիկ թագաւորն Տրդատիոս հանդերձ միաբանութեամբ կնաւ իւրով Աշխէն տիկնաւ, և քերք Խոսրովադէլտով, հրաման ետ 'ի ժողով կոչել միաբանութեամբ ամենայն զօրաց իւրոց... Եւ կուտեցան զօրքն ամենայն և մեծամեծք և կուսակալք, գաւառաւալք պատուաւորք, պատուականք, զօրավարք, պետք և իշխանք, նախարարք և ազատք, դատաւորք և զօրագլուխք, հասնալ կային առաջի թագաւորին։ Ագաթանդեղոս. 79, 8—16. երես 412.

բ. Եւ զայն ժամանակաւ յարեաւ խոռովութիւն մեծ յաշխարհին Հայոց, զի մեծ նախարարք և իշխանք երկու, գաւառաւալք աշխարհատեարք... Իշխանն Մանաւադեան տոհմին, և միւս ևս նահապետն Որդունեաց տոհմին։ Փաւստոս Բիւզանդ. III. 4. երես 9.

գ. Եւ կացոյց արքայն զՎարդան զերէց եղբայրն 'ի նահապետութեանն ազգին իւրեանց, և զՎասակ զմիջին եղբայրն զիւր գայեակն 'ի սպարապետութիւն զօրավարութեան... Սոյնպէս և զամենայն ազգսն զօրացն մեծամեծացն, նահապետացն որպէս առաջին թագաւորքն նուաճեալք յիւրաքանչիւր չափու։ Եւ հնազանդէր զմեծամեծսն, զիւրաքանչիւր զօրս բաժանեալ յամենայն կողմանց... անդ. IV. 2. երես 66.

դ. «Ապա 'ի մի ժողով կուտեցան առ արքայն Արշակ մեծամեծք նահապետք ազգաց ազգաց, տունաց տունաց, գնդից և զըշուց տեարք, ամենայն սատրապք նախարարք և ազատք, պետք և իշխանք, զօրավարք և սահմանապահք, 'ի մի հաւանութիւն միաբանական խորհուրդ»։ անդ IV. երես 67—68.

ե. «Արայ սակաւ ամօք յառաջ քան զվախճանին Նինոսի խնամակալեաց իւրոց հայրենեացն...» Մովս. Սոր. I. 15. երես 34.

զ. «Իսկ 'ի զրգուել միւս անգամ զօրացն Հայոց 'ի մարտ պատերազմի ընդ տիկնոջն Շամիրամայ՝ քինախնդիր լինել մահուանն Արայի...» անդ. I. 15. երես 35.

է. «Եւ առնու զԹագաւորութիւնն Սոսրով որդի նորա... Եւ նոյն հետայն միաբանեալ զզօրս Հայոց, անցանէ ընդ լեռոնն մեծ, վրէժս պահանջելով զմահուան հօրն»։ անդ. II. 65. երես 145.

ը. «Եւ հասանէր սպարապետն զօրավարն Հայոց Մուշեղ, անկանէր 'ի վերայ բանակին... պարսից... և զամենայն կարեան բանակին առհասարակ ընդ սուր հանէր Մուշեղ հանգերձ զօրօքն Հայոց, Զի բազումս կոտորէին, և զբազումս յաւազանոյն Պարսից ձերբախալս առնէին, և առնուին զգանձս Թագաւորին Պարսից յաւարի. և ըմբռնէին զտիկնանց տիկինն հանգերձ այլով կանամբքն։ Եւ զամենայն մաշկաւորզան 'ի բուռն արկանէր Մուշեղ սպարապետն, և զամենայն աւազանին՝ արս իբրեւ վեց հարիւր՝ հրամայէր մորթել զօրավարն Հայոց Մուշեղ, և ընուլ խոտով. և տայր բերել առ Պապ արքայն Հայոց, Առնէր զայս ի վրէժս հօրն իւրոյ Վասակայ։ Փաւստ. Բիւզ. V. 2. երես 189.

թ. «Եւ լինէին խարնուրդք ճակատուն. 'ի պարտութիւն մատնեցան զօրքն Պարսից, Մանաւանդ գունդք նիզակաւորացն յարձակեալք մոլեգնեալք, քաջութեամբ զախոյեանս 'ի վերուստ յերիվարացն յերկիր կործանէին յանդիման Թագաւորին Պարսից Շապուհ. և ընդ ընկնելուն խրախոյս բառնային ազադակելով ամենայն զօրքն պատերազմիկք Հայոց համակ, զայս բանս ասելով եթէ առ Արշակ քաջ... զի զամենայն զօր սպանէին ասէին, Արշակայ Թագաւորին մերոյ զոհ լիջեր», անդ. V. 5. երես 201.

ժ. «Այլ քաջն զօրավարն սպարապետն Հայոց լի էր քինիւ մեծաւ (իւ հօր և Արշակ Հայոց արքայի վրէժն առնելու համար), և բազում նախանձու զամենայն աւուրս կենաց իւրոց»։ անդ. V. 20. երես 212.

ժա. «Եւ ժողովեցան եկին ամենայն իշխանքն Հայոց մեծամեծք 'ի մի վայր 'ի միասին... ասէին. Զքնչ արասցուք կամ զքնչ զործեսցուք, ինդրեսցուք զվրէժ Թագաւորին մերոյ, թէ ոչ»։ Անդ. V. 33. երես 233.

ժբ. «Եւ Մանուէլն (քանզի սա էր երէց յազգին) ունէր ըզնահապետութեան ազգին տանուտիրութեան պատուին. և Վաչէ լինէր երկրորդ»։ անդ. V. 37. երես 240.

ժգ. «Ժողովեցան այնուհետեւ ըստ հրամանի տանուտէրացն Հայոց սուրբ եպիսկոպոսք ըստ գաւառաց աշխարհին Հայոց... և որք 'ի նախարարացն էին ժողովեալք՝ տէրն Սիւնեաց Վասակ, և տէրն Արծրունեաց Ներշապուհ, Վրիւ Մաղխազ, տէրն Մամիկոնէից և սպարապետն Հայոց Վարդան...»։ Ղազար Փարպեցի. Բ. 24. երես 44—5.

ժդ. «Եւ այսպէս նենգով նուաճեալ զմարդիկն՝ կալաւ զամենեսեան... զիշխանն մեծ Արծրունեաց զՆերշապուհ, և զիշխանն տանն Ամատունեաց, և զիշխանն տանն Վանանդեայ... և զայլս 'ի տանուտեարցն և յաւազ սեպհացն, խաղացուցանէին 'ի դուռն թագաւորին...» Անդ. Բ. 42. երես 75.

ժե. «Հայոց եպիսկոպոսները, որոնք գաւառների և նախարարական տների եպիսկոպոսներն են... Գիրք թղթոց. երես 48. Համաձայնութեամբ աւագ նախարարների և աշխարհի իշխանների.» անդ. երես 59.

Այստեղ հարկաւոր է ասել, որ եպիսկոպոս տանն Մամիկոնէից, եպիսկոպոս տանն Արծրունեաց և այլն, նշանակում է եպիսկոպոս Մամիկոնեան նախարարութեան, այսինքն եպիսկոպոս այն գաւառի, ուր իշխում է Մամիկոնեան տունը։ Իսկ մենք գիտենք, որ ամբողջ նախարարութիւնը վերցրած կազմում էր մի տուն և մի տանուտիրութիւն։ Այստեղից և եպիսկոպոս տանն Մամիկոնէից նշանակում է Մամիկոնէից տանուտիրութեան եպիսկոպոս։ ժդ. Մենք, մեր երկրների տանուտեարք և ազատներս»։ Անդ. երես 70.

ժէ. «Ապա իշխանաց իշխանն Աշոտ ընտրեալ զայր մի պատուական յընտանեաց տանն կաթողիկոսարանին Դէորդ անուն»։ Յովհաննէս կաթ. պատմ. երես 98.

ժբ. «Զայսպիսի ապա տեսեալ քաջատոհմիկ պերճութիւն, իշխանացն և նախարարացն Հայոց, խորհուրդ միաբանական առեալ, թագաւորի ցուցանել զնա 'ի վերայ ինքեանց»։ անդ. երես 99.

ժթ. «Քանզի արմատ դառնութեանն, զոր երբեմն խլեաց տէր 'ի տանէս Թորգոմայ»։ անդ. երես 159.

Ինչպէս որ Հայոց թագաւորը կոչւում էր թագաւոր տանն Թորգոմայ, որ նշանակում էր Թորգոմի համայն ազգի թագաւոր, այսինքն Հայաստան աշխարհի թագաւոր, այնպէս էլ Հայոց կաթողիկոսները կոչւել են կաթողիկոս տանն Թորգոմայ։ Այստեղ ամբողջ հայ ժողովուրդը նկատւել է մի տուն, և այդ տան քա-

հանայապետը՝ մէկը Հայաստանը կամ հայերի ընտեղած աշխարհը մի տուն, հայ ժողովուրդը մի ընտանիք և այդ ընտանիքի ընդհանրական կրօնապետը այդ տան քահանան ու կաթողիկոսը, իսկ թագաւորն ընդհանրական տանուտէրը:

Ինչ թւում է թէ, մենք կարող ենք սահմանափակել առաջ բերած նիւթով, քանի որ մեր խնդրի ուսումնասիրութեան համար պարբերներէից քաղուած այս հատուածներն ինքնին բաւական են հարկաւոր եզրակացութիւնների յանգելու համար: Դոցա հիման վրայ մենք կարող ենք հետևեալ երեք կէտերն ընդգծել.

ա. Ինչպէս որ մի մասնաւոր տան մէջ ընտանիքի հօր և ամուսնուն են ստորադրուած ընտանիքի ըլլոր անդամներն ու ամբողջ տունուտեղը, այնպէս էլ մի նախարարութեան մէջ նախարարական ընտանիքի մեծին՝ որին անցնում է առաջնութեան իրաւունքը, ստորադրուած է ամբողջ նախարարութիւնը: Նախարարական ընտանիքն իր նախարարութեան մէջ տանուտէր է, ու իբր այդպիսին ոչ միայն օրէնսդիրը, դատաւորն ու վարչապետըն է իր հայրենի գաւառի, այլ նաև իր սեփական զօրքն ու զրօշակն ունի ու իր զօրքերի ընդհանուր հրամանատէրն է: Սեփական զօրք ու զրօշակ ունենալն ինքնին նշան է ինքնիշխանութեան և լիակատար տանուտիրութեան: Բայց երբ պետականութեան գաղափարն յաղթող է դուրս եկել հայ միջավայրում, ինչպէս մենք տեսնք, նախարարական տունը կորցնում է իր ինքնիշխանութեան մի մասը, մտնելով պետութեան մէջ իբր բաղկացուցիչ մասն: Ահա այդ բաղկացուցիչ մասը մտնում էր ամբողջութեան մէջ իր զօրքով և զրօշակով ու նրանով կազմում պետութեան զինեալ ոյժը:

Բ. Հայ թագաւորն, ինչպէս և ըլլոր երկրների աբքայական տներն, եղել են սկզբում իրենց գաւառի իշխանն ու տանուտէրը: Հայաստանում թագաւորող Հայկազեան տունը, Արշակունիները, Բագրատունիներն, Արծրունիներն, Ռուբինեաններն և այլն եղել են իրենց գաւառի և իրենց նախարարութեան տանուտէրերը: Իշխանական այդ տներն ապագայում դառել են թագաւորող տներ, իրենց իշխանապետութեան տակ վերցնելով միւս աւելի մանր իշխանական (նախարարական) տները:

Ընթերցողը թող 'ի միտ առնի, որ պետութիւն առաջ բերող հիմունքների մասին մենք այստեղ չենք կանգ առնում և չենք էլ կարող, քանի որ դա մեր աշխատութեան սահմաններից դուրս է: Այս տեղ մենք ընդհանուր առմամբ վերցնում ենք «պետական նովթրին» ու անցնում:

Հայկական այդ թագաւորութիւնները կազմուելու համար

հարկաւոր էր, որ մի էլ աւելի զօրեղ իշխանական ցեղկամաց կամաց նւաճէր միւս ցեղերին ու իր բարձրագոյն իշխանութեան ստորագրէր: Այդպէս էլ եղել է: Սակայն այդ ստորագրելիութիւնը չէր նշանակում ոչնչացումն նւաճւած մասի. իսկ իրականում չկար նւաճումն իր իսկական մտքով, այլ միացումն՝ զաշնակցական հիմունքներով: Հայկական պետութիւնը զաշնակից նահանգներին—նախարարութիւններին միութիւնից կազմւած մի պետութիւն էր:

Հայ թագաւորը տանուտէրն էր թագաւորութիւնը բաղկացնող բոլոր գաւառներին. իր երկրի մէջ նա հանդէս էր գալիս իբր բարձրագոյն օրէնսդիր, դատաւոր և վարչապետ: Այստեղ աւելորդ եմ հաշոււմ մանրամասն հարցասիրութեան նիւթ դարձնել թագաւորի երեք այդ բարձրագոյն ֆունկցիաները: Մեզ արդէն յայտնի է, որ հայ մասնաւոր տանուտէրն իր ընտանիքի մէջ անսահման իշխանութիւն չուներ. որ նա կառավարում, դատում և օրինացնում է նախ իր կնոջ գործակցութեամբ, իսկ երբ չափահաս որդիներ կան տանը, նոցա բոլորի համագործակցութեամբ: Նոյն, այսպէս ասած սահմանադրական, մեղմ գիծը հիմն է կազմում նախարարական տանուտիրութեան մէջ, և իր հերթում համապետական տանուտիրութեան մէջ: Հայ թագաւորն երկիրը կառավարում էր նախարարական տների ներկայացուցիչների համագործակցութեամբ: Ժողով՝ գումարել՝ օրէնքներ սահմանելու պետական ծանրակշիռ գործեր տնօրինելու համար սովորական է եղել հայ պետութեան մէջ. Ժողովը մի արտակարգ բարձր հիմնարկութիւն է եղել հայ անցեալում, բայց այս մասին իր տեղում, և ոչ այս աշխատութեան մէջ, կանգ կառնենք:

Հայ թագաւորն, իբր ընդհանրական տանուտէր, էր և գլխաւոր հրամանատարը պետութեան ղինւորական կազմակերպութեան. նրա անձի մէջն էր կենդրոնանում զօրքը պատերազմի հանելու իրաւունքը: Այդ զօրքը բաղկացած էր ոչ միայն թագաւորի ցեղային նահանգի ղինւորական ուժից, այլ նաև ըստօրադիր նախարարութեանց ղինւորական ուժի համագումարից, որոնք իրենց զբօշակի միացնելով թագաւորական անձնական զօրքի զբօշակի հետ, այդ բոլորը միասին դնում էին պետութեան ընդհանուր զբօշակի տակ: Բայց զօրքն այսպէս վերցրած, կազմում է մի ընտանիք, ու իբր այդպիսին նա ուներ իր սեփական կրակարանը, զօրքի սեղանն ու սրբազան կրակը: Ինչպէս մի մասնաւոր տան մէջ ընտանիքի հայրն ու ամուսինը, իբր տան ճուրմ, առօրեայ զոհն է մատուցանում տան սեղանին—կրակարանին, որի վրա կփռւմ է տան անդամների սնունդը, այնպէս էլ թագա-

և որը գլխավոր քուրմնու զոհաբերողն է զինւորական կրակարանի որի վրայ պատրաստուեալ է հրամանատարութեան տակ գտնւած զօրքի կերակուրը: Այստեղ թող վերստին յիշէի մեռնող Արտաշէսի վերջին հառաչանքը թէ «Ո՛ր տայր ինձ զծուր ծխանի և զառաւօտն նաւասարդի»: Սա արքայական կրակարանի հանդիսաւոր կայցնելու ու դրան կից հանդէմներէ և խրախճանութեանց յիշողութիւնն է, որոնց մէջ մեզ հետաքրքրողն այս տեղում միայն «կրակարանի ծուխի» մասին մնացած այս յիշողութիւնն է:

Ե. Հայկական ցեղական իրաւունքին աղբիւր ծառայող և վերնումն յիշատակածս հատւածներն ապացուցին, որ արիական ազգերին յատուկ «Արեան վրէժ» հաստատութիւնը յատուկ է և հայ հին իրաւունքին: Այստեղ միայն յիշենք, որ արիւնն արիւնով սրբելու հին սովորութիւնը ժամանակի ընթացքում թուլացել է մեղանում: Այս ինտիտուտի յետագայ զարգացումը վրիժառութիւնը վեր է ածել փոխարինութեան. այսինքն, արիւնը սրբում էր ոչ թէ արիւնով, այլ փոխարինւում էր որևէ դրամական կամ նիւթական հատուցումով: Արիւնը դրամական վարձատրութեամբ փոխարինելու վերջին դէպքը, որ ես յիշում եմ մեղանում, տեղի է ունեցել Շիրակի Ղզլխախախ գիւղում թիւրքաց տիրապետութեան վերջին տարիներում (1875—6 թւերին): Երբ Իրիցանց տղէն սպանում է Նազարանց Պետրին, հաշտութիւն են կայացնում նիւթական վարձատրութեամբ՝ որ վճարում են Իրիցանց Նազարանց Պետոյի ընտանիքին, Պետոյի տղին, այդ երկու ընտանիքներից:

Հաշտութեան պայմաններից մէկն էլ է եղել, որ սպանողն այլևս գիւղում չապրի, այլ հեռանայ, որպէսզի դրանով նոր արիւն հոսեցնելու հնարաւորութիւն չլիինի: Եւ իբրեւ, այդ մարդասպանը բնակւում էր Թիքնիզ գիւղում, իր աներանց տան կից: Եւ անձամբ ճանաչում եմ այդ յաղթանդամ տղամարդուն, որ սրանից դեռ 15 տարի առաջ կենդանի էր, և միշտ խուսափում էր Ղզլխախախ, իր հայրենի գիւղը գնալ գալուց:

2. Արիական միւս ազգերի մօտ տան կրակաբանը տան սրբութիւնն է. նրա շուրջը միացած են ոչ միայն ընտանիքի բոլոր անդամները, այլ նաև տան աստւածները, հոգիները հանգուցեալ նախահայրերի և հայրերի: Նոյնն է և հին հայերի մօտ, որ տեսակ հասկացողութեան հետքերը մենք գտնում ենք ներկայ սովորութիւնների և ժողովրդական բանահիւսութեան տւեալներէ մէջ: Կրակարանի (Օճաղի) պաշտպանութիւնը, ասել է տան աստւածների պահպանութիւնն, անընդհատ կերպով տարածւում է տան վրայ, տան անդամների վրայ: Այս պաշտպանութիւնը, սակայն, ձեռք է բերւում կրակարանի պաշտաման միջոցով, որ կա-

յանում է կրակարանի մէջ սրբազան կրակի՝ անթեղի վառ, անշէջ պահելում և տօրեայ զոհաբերութեան մէջ:

Կրակարանի պաշտամունքից ծագում է և հիւրասիրութեան պարտականութիւնը: Արիական հին սովորութիւն է, որ հիւրը տան անգամ է քանի որ նա վայելում է տան աղու հացը: Բայց հիւրը լինելով տան հիւրը, նա իբր պղպիսին, է ամենից առաջ կրակարանի և տան աստածների հիւրը: Հին հայկական մի ասացւած շատ զեղեցիկ կերպով բնորոշելով հիւրի դերքն ու տեղը տան մէջ, ասում է «հիւրն Աստուծոնն է»: Հիւր է ամեն ոք, ով միանգամ որեէ առթիւ գտնւում է մի տան ծածկի տակ, ամեն ոք, ով անցել է մի տան շէմքը: Այդպիսի մէկը, մի անգամ անցած լինելով մի տան շէմքը, մտնում է տան աստածների հովանու և պաշտպանութեան տակ: Այդպիսի մէկին պարտաւոր է այդ տան տանուէրը ոչ միայն տան սեղանի արուած զոհաբերութիւնից մասն տալ, իրապէս անհրաժեշտ համար, տեղ՝ քնելու համար, այլ նաև աղահոգիլ այդ անձի անձեռնմխելիութիւնը՝ ձեռքում գտնւած բոլոր միջոցներով, նոյն իսկ զէնքով ու կեանքի զոտով: Այդ պաշտպանութիւնը պէտք է տրուի նոյնիսկ արեան թըշնամուն, եթէ նա դիմել է թշնամի տան կրակարանի պաշտպանութեանն ու գտնւում է արդէն տան յարկի տակ: Այդ հիւրը կարող է լինել մի յանցագործ, մի թափառաշրջիկ, մի աղքատ, մի ճամբորդ, մի փախտական, այդ միևնոյն է: Դրանից բղխում է և ողորմածութիւնը:

Արիական ազգերի ցեղական իրաւունքի այս գծերը լիովին գտնւում է հայ ցեղական իրաւունքի մէջ՝ իբր մի ցեղակից իրաւունքի, Հայ իրաւունքի արիական լինելու այս գիծն էլ լիովին ապացուցւում և հաստատւում է խիստ արժեքաւոր տւեալներով:

Աղբիւրների նիւթերը հետեւալ պատկերն է պարզում. —

Ա. Հօր կամ մօր գլխաւորապէս, և առ հասարակ տան հասակաւոր մեծնորդների դիակի առաջ լալիս, ասում են կենդանի մնացած տանեցիները «թող քո աչքը քաղցր լինի մեզ վրայ». քանի որ Արիները, ինչպէս և նրանց թուում հայերի, ըմբռնողութեամբ տան մեծած մեծերի աչքը միշտ տան և ընտանիքի վրայ է անընդհատ, նա հսկում և պաշտպանութիւն է ցոյց տալիս:

Բ. «Բո կրակարանը (օճաղը, տունը) սուրբ է ինձ համար»:

Գ. «Բո կրակարանի անունով եմ երգում, որ ճշմարիտն եմ ասում»:

Դ. «Թող իմ կրակարանը մարի, թէ ես սուտ եմ ասում»: Այս վերջին երեքը երգման բանաձևեր են, ու այս երգումն ամենանրբերիցն է:

Ե. «Քո կրակալարանի սիրուն, այս անգամ խնայիր, ներիր ինձ»։
 Զ. «Ես քո օճախն եմ ընկել»։ Այսինքն քո շէմն եմ անցել։
 Է. «Էրեւն աստուծունն է. հիւրի պատիւն մեծ է. առաջ հիւ-
 րին են կերակուր տալիս»։

Ը. «Ով և որ լինիս, մի անգամ որ դու իմ շէմը ոտք ես դրել, բարով, հազար բարով ես եկել»։

Այս բոլորը, թէև շատ կարճ, ժողովրդական բանահիւսու-
 թիւնից, տանք այժմ պատմական մի քանի յիշողութիւններ։

Թ. «Յայնու ժամանակաւ շինեաց իւր արքայն դաստակերտ մի 'ի հովիտն անուանեալ 'ի Կոզ գաւառի և ետ հրաման ընդ ամենայն գաւառս իշխանութեան իւրոյ, և հրամայեաց կարգել քարոզիչ ընդ ամենայն տեղիս աշխարհացն հրապարակին իւրոյ... զի եթէ ոք ուրուք ուստեք ինչ ֆրասեալ իցէ, կամ ոք ումեք ինչ դատ պարտիցի, ամենեքեան եկեսցեն 'ի դաստակերտն շինեսցին»։ Եթէ արիւնհարան ոք իցէ, կամ ֆրաս ուրուք ումեք արարեալ իցէ, կամ զկին ուրուք տարեալ իցէ, կամ պարտապան իցէ, կամ ոք զուրուք կարասի ունիցի, կամ ոք յումեք երկիւղած ինչ իցէ, և եկեսցէ յայն տեղի դատ և իրաւունք մի լիցին»։ Իսկ եթէ ոք ումեք ինչ պարտիցի և որում պարտիցին, եկեալ յայն տեղին՝ առանց դատի և իրաւանց կալցին, և ի դուրս տարցեն»։

Իբրեւ ել հրաման յարքայէն, ժողովեցան ախուհետեւ յայն տեղի ամենայն գողք և աւազակք, արիւնհանք, սպանողք, սուտք և մարդկոյղք, ֆրասակարք, գանձահատք, զրկողք, ստադատք, զրախօսք, գերփողք, յափշտակողք, ժլատք, Բազում ֆրասս ֆրասս առնէին, և անդր անկանէին. բազում կանայք զարս թողուին, և անդր անկանէին. բազում արք գիւրեանց կանայս թողուին, և զայլոյ կանայս առեալ՝ անդր անկանէին. բազում ծառայք գիւրեանց տերանց զգանձս ըմբռնեալ, փախուցեալք անդր անկանէին... Փաւստոս Բիւլք. IV. 11. երես 106—7.

Ժ. «Ապա կոչնն զՄուշէղ զառաջեաւ արքային, և եկն եպագ երկիր արքային. և մատուցեալ բուռն հարկանէր զալոյ եպիսկոպոսապետին Ներսիսի, և երդնոյր։ Մոյնպէս և Թազաւորին Պապայ ձեռն արկանէր, երդնոյր և ասէր՝ թէ կեցից և միտայց 'ի վերայ քո որպէս նախնիքն իմ'ի վերայ նախնեացն քոց, որպէս և հայրն իմ 'ի վերայ հօրն քո Արշակայ, սոյնպէս և ես 'ի վերայ քո, բայց միայն չաբախօսացն ունկն մի դնիցիս»։ անդ. V. 4. երես 194.

ԺԱ. «Տիգրանայ արքայի Հայոց պատուեալ զգերեզման եղբօրն իւրոյ Մաթանայ քրմապետի... որ 'ի Բագրևանդ գաւառի, բազին 'ի վերայ գերեզմանին շինեալ զի 'ի զոհիցն ամենայն

անցաւորք վայելիսցեն, և ընդունեսցեն հիւրք երեկօթիք»։ Մ. Խոր. II. 66 երես 146.

Համառօտ կերպով՝ եզրակացութիւնն է.— Հիւրասիրութեան և ապաստանի իրաւունք. երգումն՝ կրակարանի անունով, և այլն։

3. Հայ լեզուն ունի արտայայտութեան զանազան ձևեր, որոնք ամուսինների աշխարհիկ իշխանութիւնն են մատնանշում։ Յոյների մօտ ամուսիններից՝ մարդը կոչւում է *θεσποτις* և կինը *θεσποτις* հայերի մօտ մարդ ամուսինը կոչւում է տանուտէր (տանուտիայր) և կինամուսինը տիկին, տանտիկին, տիկնանց-տիկին (նայիր այս առթիւ տերմինօլօգին)։ Հայ հայրն ու ամուսինը տան մէջ ընտանիքի բոլոր անդամների վրայ տանուտէրն ու կառավարողն է, իսկ կինը նրա կողքին գործակիցն ու միաժամանակ ստորադրեալն է։ Իշխանական ոյժը ինչպէս բոլոր արինների մօտ է, այդ ամուսինը ձեռք է բերում իր սեփական տունն ու ընտանիքը հիմնելով, երբ նա *domum deductio*-ի միջոցով կապում և կնքում է ամուսնութեան դաշնը։ Հայր-ամուսինն իր տունն ու տեղը, կինն ու օրինաւոր զաւակները համարում է «իրը»։ Բայց ասածները ցոյց տւին, չի բղխում բռնակալական ուժից, ստրկութեան և ստրկացրած լինելու ըմբռնողութիւնից։ Հայ տանուտիրութեան հիմունքներին խորթ է միանգամայն անսահման իշխանութիւնը։

4. Մի տան կամ մի գիւղի հիմնման սովորութիւնների մէջ նոյն իսկ մեր օրերում դեռ ապրում են հնութեան շատ մնացորդներ։ Մի գիւղ հիմնելու ժամանակ, նրա հիմնողները շինութեան և վարելու հողը բաժանում են իրար մէջ, բայց ոչ, օրինակ, տնտեսները, կանոնաւոր կերպով, ուղիղ փոփոխներով. ամեն հիմնող բռնում է իրեն հայեցողութեան համաձայն այնտեղը, որ իրեն ամենից շատ յարմար է թւում։ Այս են ասում մեր հին գիւղերի տեղագրութիւնը և փոփոխների բաժանումը։ Հին գիւղերի փոփոխների բաժանումը մեզ սովորեցնում է նաև մի այլ խիստ կարևոր բան որ մատնանշում է արիական միւս ազգերի գիւղ ու տուն հիմնելու միևնոյն պատճառն ու հանգամանքը։ Այս աշխատութեան շրջանակը չի թոյլ տալիս, որ կարողանանք ընդարձակ կերպով կանգ առնել այդ մանրամասնութիւնների վրայ, մանրամասն վերլուծել հին հնարիւնների և արիական ազգերի տունն ու գիւղ հիմնելու սովորութիւնները հայկականի հետ։ Դա մեզ շատ հեռուն կտանէր, ուստի և համառօտ կերպով անենք մի քանի դիտողութիւններ և անցնենք։—

Ով ծանօթ է մեր շատ հին գիւղերին—նոյնը նկատում է և նորերի մէջ—կտեսնի, որ գիւղը իրապէս բաժանւած է խումբ

խումբ իրար կից տների. այդ խմբերից իւրաքանչիւրը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի ընդհանուր նախահօրից ծագած որդիների, թուների և յետագայ ժառանգների իրար կողք կողքի շինւած տների մի կիսուածք: Տների այդ կշտի կիսուածքը, դժւար չէ երևակայել, որ առաջ է եկել բնտանիքի ստորաբաժանումից, մայր ընտանիքից նոր բաժանւած իւրաքանչիւր նոր անդամ իր տունը հիմնել է հայրենական տան կողքին կառած, և այսպէս շարունակաբար, երկար ժամանակների ընթացքում կազմել է գիւղական մի թաղ, ըստ մեծի մասին բաղկացած միևնոյն ծագումն ունեցող ընտանիքների շարքից: Հայ ընտանիքի կազմակերպութեան հիմը, ինչպէս տեսանք, ոչ թէ պատրիարխալ է, այլ արեւնակցական. սոյնպէս էլ հայ գիւղի հիմնելն ու առաջ գալը արեւնակցական կապերով՝ միմեանցից ծագող ընտանիքների իրար մօտ տուն հիմնելու և խմբւած ապրելու ձգտմամբ է պայմանաւորում. այստեղ, 'ի հարկէ, մենք կանգ չենք առնի տնտեսական և այլ պատճառների վրայ. այս աշխատութեան մէջ այդքան հետուն գնալու իրաւունքը չունինք:

Հայրը գիւղ է հիմնում թէ տուն, նա այդ ձեռնարկութիւնը սրբազործում է զոհաբերութեամբ (մատաղով): Առաջին դէպքում զոհին մասնակցում է գիւղ հիմնող ամբողջ համայնքը. վառում է մի ընդհանուր օճաղ, որ այս դէպքում գիւղի համայնական կրակարանն է ներկայացնում. ու նրա վրայ եփում հասարակական մատաղը: Դրանից մասն կն ստանում ոչ միայն նոքա, որոնք նիւթապէս մասնակցել են զոհաբերութեանը, այլ և համայնքի աղքատները, պատահական անցորդներ և չքաւորներ: Երկրորդ դէպքում—տան հիմնման—մատաղին հաղորդւում են տանեցիք, մերձաւոր դրացութիւնն ու աղքատները: Տան հիմնման ժամանակ, երբ արդէն տունը պատրաստ է, պէտք է մատաղն ու առհասարակ տան առաջին կերակուրն եփել և հացը թխել, հարկաւոր է, որ նոր տան կրակարանում կրակ արւի—առաջին սրբազան կրակը: Այդ կրակն այլ կերպ չի արւում, քան թէ հին տնից պատրաստի կրակ նոր տան կրակարանը փոխադրելով (այդ առթիւ տես Ազգագրական Հանդէս. X, երես 184): Ինչպէս մենք տեսանք, նոյն սովորութիւնն է գործում նաև ամուսնութեան միջոցով նոր տուն հիմնելիս: Թէ հնաիկների, ' թէ յոյների և այլ արիւնների, նրանց թւում և հայերի հարսանեաց ժամանակ, պսակւող զոյգի domum deduction ժամերի միջոցով է լինում: Արդէն ասել ենք, որ ամուսնացող նոր զոյգին ուղեկցող

1. Արիւնքի մասին տես երես 98.

կրակը ոչ այլ ինչի, եթէ ոչ խոր հնութիւնից մնացած մի սովորութեան հետքէ իսկ այդ սովորութիւնն արդէն մենք տեսանք:

Տան հիմնելու երկու դէպքումն էլ ղեկավարող միտքն է հայրենական տան շարունակելը մի նոր ընտանեկան կազմակերպութեան միջոցով: Բայց ընտանեկան կազմակերպութիւն (Häushalterorganisation) գոյութիւն կարող է ունենալ և իբր այդպիսին ընդունել և ճանաչել միայն ու միայն օրինաւոր ամուսնութեան միջոցով: Իսկ այդ կազմակերպութեան հիմնումն ու շարունակելը հնարաւոր է օրինաւոր կնոջից ծագած օրինաւոր ժառանգների, յատկապէս արու զաւակների միջոցով: Հայ ըմբռնողութեան համաձայն, որը կգտնենք նաև արիական միւս ազգերի մօտ համարեա նոյնութեամբ կրկնած, հայրը ու ծնողը ոչ միայն իր վերջին հանգիստը խաղաղութեամբ կառնի, երբ իր վերջին շունչը փչելիս իր աչքերը կծածկէ իր հարազատ, իրենից ծագումն առած որդի (կամ որդիները), այլ նաև նոյն կեանքում նա հանգիստ կգտնէ և իր հոգին անդորրութեան մէջ կլինի, եթէ այս կեանքում որդիներ ունի, հարազատ, իրենից ծագած որդիներ: Այդ յաւիտենական խաղաղութիւնը ձեռք է բերում նա, այս կեանքում նրա հարազատ որդոց միջոցով տւած հոգոյ հացով, մեռելոցի օրհնութեամբ և մեռելոցների մատաղներով (զահարերութեամբ): Ծնողներին այն կեանքի այդ անդորրութիւնը տրւում է նաև մի այլ միջոցով, որ կամ ծնողներից իբր պատւէր անցնում է որդոցը և կամ որդիքն իրենք իրենց կողմից են այդ միջոցը գործադրում, դա հոգեբաժին տալու հին սովորութիւնն է: Այդ բաժինը տրւում էր հնումն մի մեհեանի, հեթանոսական մի սրբութեան գուռն էր ուղարկւում, իսկ մեր օրերում (քրիստոնէութեան ժամանակ) հոգեբաժինը գնում է եկեղեցիներին, աստուածահաճոյ հիմնարկութեան: Հոգեբաժին թողնելու սովորութիւնից ծագում է իր ունեցածի մասին սկզբներում բանաւոր և շատ յետագայ ժամանակներում արդէն զրաւոր կտակի հիմնարկութեանը: Այս առթիւ աւելի երկարեն այստեղ տեղին չեմ հաշւում. դա—այսինքն կտակի ինստիտուտի գոյութիւնն ու գործին Հայոց մէջ, աւելի որոշ ասած հայ իրաւունքի մէջ, իր լուսարանութիւնը կգտնի իրեն յատկացրած տեղում. ուստի և անցնենք:

Միանգամայն սխալ կլինէր, որ հարազատ որդին մարմնացնում է այս կեանքում իր հօրը: Որդին ծագելով հօրից—և այդ անզատեալ հարազատ հօրից, քանի որ մի հոմանից սերւածը չի կարող իր ծնող մօր օրինաւոր ամուսնու սերունդը կոչւել և նրա տունն ու կրակարանը շէն ու վառ պահել—այլ ծագելով հօրից, ոչ թէ նրան մարմնացնում է, այլ բռնում է նրա տեղը: Հայկա-

կան ժողովրդական մի ասացած գեղեցիկ կերպով բնորոշում է հօր և որդու միջի յարաբերութիւնն այդ ասածն մտքով.— «մեծանաս, հօրդ տեղը բռնես: Ըն իրօք էլ, հայ ընտանիքի մէջ, ինչպէս և արիական շատ ազգերի մէջ, որդին մեծանում հօր տեղն է գրաւում ոչ միայն վերջնիս մահից յետոյ, այլ նաև նրա կենդանութեան ժամանակ, եթէ նրանից բաժանւած է, իսկ երբ նրա հետ միենոյն յարկի տակն է ապրում, նւաճում է նրա տեղի մի մասը: Այստեղ «հօր տեղ» դարձւածքը շատ նիւթապէս չպէտք է հասկանալ, այլ այն մտքով, որ նա—որդին—էլ չափահաս լինելուց յետոյ դառնում է տանուտէր իր հօր կողքին, քանի նա կենդանի է. և լիովին ժառանգում է հօրն ու ծնողին, երբ նա աչքերը փակել է:

Արիական ազգերի մէջ, նոցա թւում և հայ հայրը խիստ հետաքրքրւած է ուրեմն, որ ինքն անպատճառ ժառանգ ունենայ. թէ ինչմէ է այդ նրան հարկաւոր, այդ պարզեց արդէն: Արդ եթէ մի ամուսնական զոյգ ինչ պատճառից և լինի, զուրկ է զաւակնելից. հապա ինչպէ՞ս բաւարարել այդ խիստ նշանակալից պահանջը: Արիական ազգերն այս պրօբլեմը լուծել են խիստ պատուաւոր կերպով, ինչքան և նոցա ըմբռնողութեամբ ամուսնական դաշնը կռւում է ամբողջ կեանքի համար ցմաւ:

Հնդկական մի սրբազան գրքի (Baudh. II, 2, 3, 27.) մէջ հետեւեալ միտքն է արտայայտւած. «Որովհետև սերունդ, առանձնապէս որդիներ, յարուցանելը մեծ նշանակութիւն ունի ու ամուսնութեան իրական նպատակ է նկատուում, դրա համար և մի կին, որի ամուսինը ամուլ է (impotent), կարող է նրան թողնել և ուրիշին առնել (Leist. jus gentium, հրեա 102—3). Նոյն միտքն է արտայայտւած 447 թ. (Ք. յ.) Շահապիւմանի ազգային ժողովի 5-րդ կանոնի մէջ. ուր ասւած է, եթէ մարդն իր ամուլ կնոջն արձակէ, նրան տայ ոչ միայն այն բոլորն, ինչ որ նա բերել է իր հետ ամուսնու տունը, այլ նաև տուգանք, եթէ կինը բացի ամուլութիւնից այլ արատ չունի: Հայ այս կանոնի մէջ ամուլութեան պատճառով ամուսնութեան լուծելի լինելու միտքն աւելի բացորոշ կերպով է արտայայտւած, քանի որ ամուլութեան պատճառով ամուսնութիւնը լուծելու միտքը կնոջ կողմից երեխաներ չբերելու հանգամանքից է ծագել: Հին մարդու խելքին ամենամօտ բանն այդ կարող էր լինել. արտաքին նշանից դատելով, նա ասում էր,—կինը զաւակներ չի ծնում, ուստի և նա ամուլ է, ու նա զաւակներ չյարուցանող այդպիսի ամուսնութիւնը լուծում էր որպէս զի մի նոր ամուսնութեան միջոցով կարողանար այդ խիստ ցանկալի նպատակին—որդիներ ունենալ ու նոցա միջոցով իր

տունուտեղն և օճախը շարունակել տալ—հասնել:

Այսպէս ուրեմն, հայրենական տունը շարունակել տալու ձգտմամբ խրատ կերպով շահագորգուած հայ ամուսինը լուծում էր իր ամուսնութիւնը. դա հարկաւոր էր օճախի պահպանութեան համար: Բայց զաւակ չունենալու պատճառը կարող է և ամուսինը չլինել, այլ մի ուրիշը: Այսպէս, ամեն տարբեր և ամեն ժողովուրդների մէջ էլ պատահում է որ արհեստական կերպով ոչնչացնում են արգանդի պտուղը. բոլոր ժողովուրդների մէջ էլ կարող է պատահել, որ ամուսիններից մէկը չի կամենում կամ դիտմամբ հրաժարւում է ամուսնական պարտաւորութիւնները կատարել, և կամ այդ պարտաւորութիւնները կատարելիս, այնպէս է վարւում, որ յղիութիւն տեղի չունենայ: Այս բոլոր դէպքերն էլ մի հետեանք ունին, այն է, սերունդ յարուցանելու անհնարաւորութիւն: Մի ժողովուրդ, ինչպէս հայերը, այնպէս էլ արիական միւս ազգերը, երբ այդպէս հրամայօրէն շահագորգուած է ժառանգ ունենալու ու նրա միջոցով իր տունուտեղը շարունակել տալու լուրջ ձգտմամբ, նա չէր կարող հանդուրժել, որ արհեստական կերպով էլ ժառանգ ծնելը խանգարւէր: Որեւէ անհատ ամուսնի կողմից այդպիսի մի վարմունք պէտք է նկատւէր և իրօք էլ բոլոր արիների մօտ նկատւել է իբր յանցանք և այն էլ ծանր յանցանք: Այդպիսի մէկը պատժի էր ենթարկւում, համաձայն տեւալ մի ժողովրդի մէջ զործող իրաւական նորմերի: Հայկական օրէնսդրական հին նորմեր այդ առթիւ չեն մնացել, եղածն էլ քրիստոնէական շրջանից է, սակայն խորը հնութեան կնիք է կրում: Այսպէս. Յովհան Մանդակունուն (490 թ. ք. յ. վախճանւած) վերագրւած մի հրահանգութեան մէջ, որ մենք գրտնում ենք «Հայոց եկեղեցական կանոնադրքի» մէջ, կան հետեւեալ նախադասութիւնները. «Երբ մէկն անցուցքի (վիժելու, Abortus) միջոցով մի յանցանք կգործէ յղութեան ժամանակ». «Երբ յղի կլինի իր արգանտի պտուղը (անցուցքի միջոցով) կսպաննէ» և այլն, այդպիսին արժանի է պատժի: Ներսէս կաթողիկոսին¹ վերագրւած մի կանոն (27-րդ) իննը տարւայ եկեղեցական ապաշխարութեան է ենթարկւում այն ամուսնուն, որ իրեն անցուցքի յանցանքով մեղաւոր կանէ: Այժմ էլ, հայ ժողովրդի ըմբռնողութեամբ (գաւառներում, դեռ քիչ «այսպէս ասած» քաղաքակրթ-

¹ Անյայտ այս ներսէսին յատկացրած այս կանոնախումբը հրատարակեցի եւ 1908 թիւն մի ընդարձակ առաջաբանով շեանգէս Ամսօրեայի մէջ (IV—VII-րդ տետրեր): Հրատարակութիւնն եղել է Նիմփոնի մատենադարանի բոլոր ձեռագրերի համեմատութեամբ:

ւած վայրերում) բռնի միջոցով վիժումն առաջ բերելը խիստ դատապարտելի է, և այդ ոչ այն պատճառով, որ անցուցքի համար արհեստական միջոց է գործ դրւում, այլ այդ անցուցքի միջոցով մի կեանք ոչնչացնելու համար: Այդ կեանք ոչնչացնելը հաշւում է նոյն ըմբռնողութեամբ շնորհի կորցնելը:

Այս պատիժները ցոյց են տալիս ժառանգ թողնելու հոգացողութեան լրջութիւնը: Եկեղեցական կանոնների այդ սահմանումները չպէտք է քրիստոնէութեան ծնունդ հաշւել. նոյնը զրոնում ենք մենք շատ հին օրէնսդրական ակտերի մէջ՝ ոչ քրիստոնէական շրջանից և ոչ քրիստոնեայ ազգերի մօտ: Զանազան ժամանակներում ձեռք առած այդ միջոցները չէին կարող ամլութեան առաջն առնել, թէև ամլութեան հնարաւորութիւնը պակասեցնում էին: Ամուսնալուծութեան կամ ամուսնութիւնը ամլութեան պատճառով լուծելու հնարաւորութեան ըմբռնողութիւնը շատ յետին դարերի ծնունդ է: Այդ հասկացողութիւնը հասուն եղաւ քաղաքակրթութեան աւելի բարձր աստիճանների վրայ: Նախ քան այդ, ինչպէս և դրա երևան գալուց յետոյ ևս գործում էր մի այլ խոշոր ինստիտուտ. նա չի դադարում գործել և այժմ: Այստեղ խօսքը վերաբերում է կնոջ չբեր եղած ժամանակ մարդու և կնոջ համաձայնութեամբ կողմնակի մի մարդու միջոցով ժառանգ յարուցանելուն: Այս մասին կխօսենք յաջորդ պրակի մէջ. անցնենք դրան:

§ 7.

ՕՏԱՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԻՐ ՍԵՓԱԿԱՆ ԿԵՆՁԻՑ ԺԱՌԱՆՑ ԾԱՐՈՒՒ

ԾԱՆՆԼՈՒ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆԸ (Niyoga)

Վերնագիրն ինքնին ցոյց է տալիս, որ սովորութիւն է եղել հնումն օտարի միջոցով որդիներ ունենալ երբ մէկի կինն ամուլ է: Ըստ այդ, բոլոր արիւնների, նոցա թւում և հայերի մօտ գոյութիւն ունեցող սովորութեան, նոյն տղամարդը, որին բնութիւնը զրկել է որևէ կերպ որդի ունենալու հնարաւորութիւնից, կարող է ուրիշի միջոցով իր կնոջից զաւակներ յարուցանել տալ իր համար: Այսինքն մարդու ոչ միայն գիտութեամբ, այլ նաև յատուկ ցանկութեամբ, և որ գլխաւորն է, նախաձեռնութեամբ իր կինը պէտք է սեռական յարաբերութիւն ունենայ մի ուրիշի հետ մինչև յղիանալը: Եղիանալու ակտով վերջանում են այդ յարաբերութիւնները, իսկ ծննդաբերութեան ակտով հասնում է անզաւակ ամուսինը

ժառանգ ունենալու նպատակին: Իհարկէ, խօսքն այստեղ վերաբերում է անդաւակ ամուսնուն, որ իր կնոջից ամուլթեան պատճառով զրկւած է ժառանգ ունենալու հնարաւորութիւնից: Սա համատարած մի սովորութիւն է բոլոր արիական ազգերի մէջ: Սկզբնական շրջանում անդաւակ ամուսնուն զաւակ յարուցանող այսպէս ասած, օգնականն ու օժանդակը լինում էր կամ կարող էր լինել իր մերձաւորացոյն ազգականը. այսինքն եղբայրը-ապա աւելի հեռաւոր ազգականները, և այլն: Այն դէպքում, եթէ հակառակ ձեռք առած այդ միջոցներին այնուամենայնիւ կրնն ամուլ էր մնում, այն ժամանակ արեւացի հայը, հնաթիւր, յոյնը և այլն զիմում էին այլ միջոցներ, որոնց մասին խօսք կլինի իր տեղում:

Niyoga ինստիտուտի լինելն հայ իրաւունքի մէջ ապացուցւում է շատ փաստերով: Այդ ինստիտուտի մնացորդներն հայ ժողովուրդի կեանքից վերացնելու օրէնսդրական ձեռնարկութիւններով են զբաղւած եղել ազգային երկու շատ նշանաւոր օրէնսդիր ժողովներ. մէկը Աշտիշատինը 365 թւին և միւսը Շահապովանինը 447թւին: Ինչպէս հաղորդում է մեզ հայկական պատմագիր Փաւստոս Բլազանդացին, Աշտիշատի վերն յիշած ազգային ժողովն արգելել է ի միջի այլոց ամուսնութիւն ճնուծի հետ: Փաւստոսի այդ տեսլը հաստատւում է կողմնակի կերպով Մովսէս Խորենացու նոյն ժողովի սահմանումների մասին յիշատակութեամբ: Փաւստոսի մօտ կարգում ենք.— «ժողովեցան ի գիւղն Աշտիշատ, ուր զառաջինն ղեկեղեցին էր շինեալ... ի տեղի լեալ նախնեացն ժողովոց սխնհոդոսինա: Ի ժողով հաւանութիւնս եկեալ ամենեցուն... Եւ զի լինիցին յամուսնութեան օրինաւորք, մի ստել և մի դաւ բերել իւրեանց ամուսնութիւնն գալ կողմանց և փախչել աւելի ի մերձաւոր և յազգին տոհմակից խառնակութեան ամուսնութենէն. և մանաւանդ ի մերձաւորական ի նուոց և որ գամ մի այսմ նման լեալ էր ինչ: VI-րդ դարութիւն, գլուխ Գ. Նոյն առթիւ Մովսէս Խորենացու մօտ կայ,— ժողով արարեալ եպիսկոպոսաց, և համօրէն աշխարհականօք, կանոնական սահմանադրութեամբ հաստատեաց... Եւ գերկուսս զայսոսիկ յազգաց նախարարացն բառնալ, մի զմերձաւորաց ինամիութիւն, զոր վասն աղանկոյ սեպհական ազատութեանն առնէին, և միւսն՝ որ ի վերայ մեռելոց դործէին ոճիրս ըստ հեթանոսական սովորութեան III գիրք—20-րդ գլուխ: Սոցա յիշատակած այս արգելքը կրկնւում

1. Նայիր այս առթիւ Zeist; Alt-arisches Jus gentium ԿԲ. 105. և Kohler; Zeitschr. f. vergl. Rechts wissenschaft III. ԿԲ. 394.

է Շահապիվանի ժողովի կանոնադրութեան 12-րդ յօդաւածում, որն իր տեղում չենք խուսափել ամբողջովին առաջ բերել, երբ խօսք կլինի ամուսնական հասուչհասի խնդիրներէ մասին: Նոյն արգելքը գտնուում ենք մենք Աղանից Վաչագան թագաւորին վերագրած կանոնախմբի 1) 9-րդ և Ներսէս կաթողիկոսին նւիրած կանոնախմբի 24-րդ յօդաւածի մէջ:

Աշտիշատի ժողովի կանոնի «մերձաւորական ի նուոց»ը դեռ 1904-ին մեր՝ «Ամուսնութիւն, ամուսնալուծութիւն և Քաղաքական պատկառնալի աշխատութեան մէջ, իսկ վերջնականապէս 1908 թիւն Ներսէս կաթողիկոսին վերագրած կանոնախմբի հրատարակութեան առաջարկումն բացատրել ենք: Ըստ այդմ մերձաւորագոյն «Սուլ» եղբոր կիներն է, իսկ աւելի հեռաւոր Նուերը՝ եղբոր որդու, հօրեղբոր, հօրեղբոր որդու կիներն է. և այլն: Խոնջ ծագումն ունի Շուս բառը, յայտնի չէ, նա կայ հին լատիներէնում և յունարէնում, հաշտում է, բայց ոչ հաստատապէս, յունարէն և լատիներէնի մէջ յունական փոխառութիւն: Այդ բառը, չգիտեմ պատահե՞աւ է նոր յունականի մէջ, թէ ոչ, բայց պատահում է հայ գաւառաբառերուներէ մէջ. օրինակ էրզրումի, Տրապիզոնի, Արտուինի և այլն բարբառներում. նոյն բառը պատահում էր 20-30 տարի առաջ նաև Ալէքսանդրապոլում՝ էրզրումցի և Կանցի գաղթականների մէջ:

Բոլոր մեր առաջ բերած տեւալները ցոյց են տալիս, որ Նիիօզա ինստիտուտը դեռ 4-րդ դարումն առ սակաւ կորցրած է եղել իր սկզբնական ձևը, փոխարինւելով իսկական ամուսնութեան: Այս ձևն էլ անցել է երկու ֆորմացիոն, որոնցից առաջինը անզաւակ մեռնող եղբոր կամ մերձաւոր ազգականի կնոջ հետ ամուսնանալը, նրան ժառանգ յարուցանելու համար. իսկ երկրորդն արդէն մերձաւոր մեռնող ազգականի կնոջ հետ ամուսնանալն է, առանց որ ի նկատ առնէր, թէ արդե՞ծք մեռնողը ժառանգուելի թէ ոչ:

Բոլոր արիական ազգերի մօտ անզաւակ ամուսինը չէր կարող հակառակ կնոջ կամքի նրան հարկադրել, որ նա իր ամուսնու ազգականի հետ սեռական յարաբերութիւն ունենայ՝ յղիանալու համար. ասել է մի պահանջ էր, որ կիներն այդ բանի համար իր համաձայնութիւնը տար: Նոյնպէս և պիտի լինէր հայերի մօտ: Շահապիվանի ժողովի կանոնները ցոյց են տալիս կողմնակի կեր-

1. Այս կանոնախումբը խիստ հետաքրքրական է իր բովանդակութեամբ, և ամբողջովին առաջ է բերւած Հայոց կանոնադրոյ շատ օրինակների մէջ:

2. Այդ առթիւ անհ շանդէս Ամօրեայ 1908 թիւ V—VII գլանոնը Ներսէսի Հայոց կաթողիկոսի:

պով, որ այդ այդպէս էլ եղել է.— Շահապիվանի օրէնսդիրն ասում է, «ոչ ոք է կարող իր արիւնակցի կնոջ հետ ամուսնանալ կամ նրա հետ սեռական յարաբերութիւն ունենալ, եթէ նոյն իսկ այդ բանը նրա հանութեամբ էլ լինէր», (12-րդ կանոն)։ Այսուեւալը պարզորոշ կերպով ասում է, որ մերձաւորի կնոջը թէկուզ նա այդ բանին համաձայն էլ լինի, ոչ կարելի է առնել և ոչ էլ նրա հետ սեռական յարաբերութիւն ունենալ։ Այստեղ մեզ հետաքրքրողը «համաձայնութիւնն» է, իսկ դա լիովին կերպով ապացուցեց վերոյիշեալ պատմական տեւալով։

Մինչի այժմ ասածներս հնարաւորութիւն են տալիս հետեւեալներն հաւաստել, ըստ հայ հին իրաւունքի 1. կնոջ ամուլութեան պատճառով անղաւակին ժառանգ յարուցանելու գործում օգնողն եղել են մերձաւոր ազգականները— եղբայրը, հօրեղբայրն, և այլն. 2. Անղաւակ մեռնողի կինն առնում էր նրա մարդի մերձաւոր ազգականը՝ ժառանգ յարուցանելու համար։ 3. Թէ սեռական յարաբերութիւնը անղաւակ մարդու կենդանութեան ժամանակ, և թէ նրա մահից յետոյ մեռնողի կնոջն առնելը կարող էր տեղի ունենալ վերջինս նախընթաց համաձայնութեամբ։

Նիխօզայի կիրառումն կեանքի մէջ ձգտում էր տան կրակարանի անշէջ պահելն և սերնդի շարունակելն ապահովել, Այս ինքնատիտուտի յետագայ զարգացումն ու կերպարանափոխումը— մեռած եղբոր կնոջ հետ (հարսի հետ) ամուսնանալը իրականացնում էր ոչ միայն ամուսնական ինքնատիտուտի այդ հոգեւոր-կրօնական և աշխարհիկ հիմունքների ենթադրութիւնը, նաև լուծում էր տնտեսական մի ծանր խնդիր, որ մեռնողի ընտանիքի համար շատ արժեքաւոր էր։— Մեռած եղբոր կնոջ հետ ամուսնանալու միջոցով, մեռնողի եղբայրն առնում էր ժառանգութեան բաժանման առաջն։ Այրի կինը ոչ միայն իր բաժինըով, այլ նաև իր մարդու կարողութիւնից իրեն հասանելի մասով մնում էր իր հանգուցեալ ամուսնու տան և հարստացնում էր իր տաքերը նրանով, որ նրա հետ ամուսնանում էր։

Այստեղ խիստ կարեւոր եմ համարում նաև մի այլ խնդիր վերլուծութեան ենթարկել, որը Կոյլերի կարծիքով Նիխօզա ինքնատիտուտի հետքեր է իր մէջ պարունակում. իսկ ըստ իմ կարծեաց, Նիխօզայի հետք այնտեղ չկայ։

Պրօֆեսոր Յ. Կոյլերն իր «Հնդկական ամուսնական և ընտանեկան իրաւունք» աշխատութեան մէջ ուսումնասիրելով Նիխօզա ինքնատիտուտը, պատահում է նրանց ընտանեկան և ամուսնութեան սովորութիւնների մէջ հետեւեալին.— ըստ այդմ «երբ

փեսացուն ¹⁾ մեռնում էր մինչի պատկը, հարսնացուին առնում էր փեսացուի եղբայրը: Յարգելի պրոֆեսսորն «Բերմանների» իրաւունքն ուսումնասիրելիս պատահում է նոյն երեոյթին, այսինքն չէրք մեռնում է նշանադրւածներից մէկը, նրա քոյրը կամ եղբայրը (նայելով թէ մեռնողն հարսն է թէ փեսան, նրա համաձայն հարսի քոյրը կամ փեսի եղբայրը) առնում է մեռնողին նշանածին: Ետն երեոյթը պատահում ենք նոյնութեամբ նաև հայերի մօտ: Արդ փորձենք վերլուծել այդ երեոյթների պատճառներն ըստ կարելոյն կարճ կտրելով մեր խօսքը:—

Նիթօզա ինստիտուտի հիմնական ենթադրութիւնը կայանում է նրանում, որ անզաւակ ամուսնու ընտանեկան օճաղը և սերունդը շարունակելի և հաստատ մնայ: Քանի որ մէկը չի ամուսնացել—նշանադրութիւնն ամուսնութիւն չէ—և քանի որ ամուսնութիւնն անզաւակ չի դուրս եկել, չի կարող և ոչ մի խօսք լինել նիթօզա ինստիտուտի կիրառման մասին: Այսինքն այն ինստիտուտի գործունէութեան մասին, որի միջոցով ամուլ մնացած կնոջից զաւակ յարուցանւէր անզաւակ մնացած տանուտիրոջն ու ամուսնին՝ նրա օճախը շարունակելու համար: Մեր բոլոր ասածներից պարզ է, ինչ որ է և Նիթօզա ինստիտուտի էութիւնը, անզաւակ մերդն է իր կնոյր օտարի միջոցով յղիանալու տալիս: Նշանադրւած աղջիկը մի պարզ խօսեցեալ է, խոստացւած մէկը, որ յետոյ, ապագայում պիտի կին դառնայ: Իսկ նա կին է դառնում հարսնաւի domum deductio—միջոցով փեսի տան շէմքն ու առուգաստը մտցնելով: Նշանածը միայն այդ բաների միջոցով է կին դառնում, առանց այդ բաների, եթէ նա նոյն իսկ սեռական յարաբերութիւն էլ ունենայ իր նշանածի հետ, նա դրանով կին չի դառնում: Եղբա նոյն իսկ կարող են ապրել իրար հետ, այս դէպքում էլ աղջիկը չի դառնում տանտիրակին և ամուսին, այլ հարճ (Konkubine): Նշանած աղջիկը ամուսնու և տանտիրակնոյ իրաւունքներն ու պարտաւորութիւնները ձեռք է բերում dextrarum conunctio-ի, domum deductio-ի և վերջնականապէս առաջին գիշերւայ ակտերով: Քանի այս բոլորը տեղի չի ունեցել, նշանածը մնում է լուկ նշանած կամ նշանդրած, ուրիշ ոչինչ: Բայց ունինք նաև մի քանի այլ խորհրդածութիւններ:—

Ամուսնութիւնն, ինչպէս գիտենք, մի համաձայնութիւն է, որ հիմնուած է մարդու և կնոջ մէջ եղած մի դաշինքի վրայ: Այդ դաշինքը կապւում է նշանադրութեան օրը, երբ աղջկայ տէրը խօսք

1. Zeitschr. f. vergl. Rechts wissenschaft III. հր. 355.

2. Անդ. VI. գիրք. հր. 101.

է տալիս փեսային կամ նրա կողմի մարդուն, թէ իր աղջիկը տալիս է: Դաշինքը կապելուն իբր առհասարակեայ, տրուում է աղջկայ տիրոջը մի նշան. ուրիշ խօսքով, աղջկայ վրայ նշան է դրոււմ. ճիշտ այնպէս, ինչպէս մի ձի կամ ոչխար զնելիս, երբ առնելու խօսքը արոււմ է, առնողը զնած ձիու կամ ոչխարի վրա մի նշան է դնում, դրա հետ տալով նաեւ մի կանխավճար: Սա էլ մի դաշն է, սովորական մի դաշն: Այս երկու դաշնադրութիւններն էլ կողմերի կողմից իրականանում է այն ժամանակ, երբ երկրորդ դէպքում ձի կամ ոչխար առնողը վճարում է ըստ պայմանի նրանց լրիւ գինն ու ստանում իր ապրանքը, և երբ առաջին դէպքում սովորոյթի հարկաւոր պահանջը կատարելուց յետոյ աղջկայ տանը վերջնիս հայրը փեսային է տալիս իր աղջկայ ձեռքը. այսինքն երբ պայմանագրի օրեկտը յանձնում է դաշնագիր կողմերից միւսին՝ վերցնողին, առնողին, զնողին: Արդ, երբ նշանադրութեան կոնտրակտը չի ի կատար ածւել կոնտրակտի մէջ յիշւած օրեկտի յանձնամբ, ինչպէս կարող է խօսք լինել ամուսնութեան մասին: Ասածներէիցս պարզ է, որ ոչ նշանադրութիւնն ամուսնութիւն է, և ոչ էլ նշանած աղջիկը՝ կին:

Kohler-ի կարծիքն անընդունելի է նաեւ հետեւեալ հիմունքներով. — Նիփոգա ինստիտուտի էութիւնը և նրա տեղի ունենալու մոմենտները մեզ համար պարզ է նախընթաց շարայաբութիւնից, ուստի և խուսափենք աւելորդ կրկնութիւնից: —

Ըստ հայկական ամուսնական իրաւունքի, ինչպէս և ժառանգական իրաւունքի, այն նշանադրեալը, որի նշանածը մինչի պսակի կատարելը, այսինքն նշանադրութեան պայմանի ի կատար ածւելու օրը, մեռել է, չի այրիանում և այրի չի էլ կարող կոչւել: Հանգամանքը չի փոխոււմ որն էլ նշանածներից մեռնողը լինի, հարսնացուն, թէ փեսացուն: Եթէ նշանածը մեռած կոյս փեսացուն կամ նշանածը մեռած կոյս հարսնացուն ուղենայ նորից նշանւել և պսակւել, նա նշանուում և պսակւում է իբր կոյս: Իսկ մենք գիտենք, որ բոլոր ազգերի մէջ ամենահին ժամանակներից սկսած կոյսի պսակը կատարւում էր միայն նրան յատկացրած ծէսերով և խորհուրդներով: Բացի դրանից ինչպէս բոլոր արիական ազգերի, այնպէս էլ նոցա թւում հայերի մէջ և ոչ մի դէպքում նշանադրւածներից մէկի մեռնելուց յետոյ կենդանի մնացած նշանածը կարող է մեռածի ժառանգը հաշւել կամ նրան ժառանգել: Այն բէալ պայմանագիրը, որի հիմամբ նոքա նշանադրւած են, ճիշտ է պարտաւորական է երկու կողմերի համար էլ, սակայն նա ինքն ըստ էութեան մեծ արժէք չունի, քանի որ պայմանը

կնքող կողմերից իւրաքանչիւրն իրաւունք ունի այդ պայմանը խզել: Ի հարկէ, այդ պայմանի խզելն անպատիժ չէ, նրա խզողը զրկւում է կանխավճարից ճիշտ այնպէս, ինչպէս որ ձի գնողը զրկւի իր կանխավճարից, եթէ ձի գնելու դաշնը խզէ և իր գնած ձին չուզենայ այլ ևս տանել: Վերցնենք նաև այս դէպքը: — Միշտ ի նկատ ունենանք, որ նշանագրութիւնը վաճառականական մի պարզ ակտ է, ուր կողմերը պայմանաւորւում են վաճառքի օրեկտի վրայ: Մէկը վաճառում է 20 արջառ, բայց գնողն իր ապրանքը չի տանում, նա վճարում է վաճառողին իբր գնման առհաւատչեայ՝ մի կանխավճար և պայմանաւորւում մի շարքից կամ յետոյ դալ իր ապրանքը տանել՝ վճարելով նրա գինը: Այս դաշնը կապում է վաճառողի ձեռքը և նրան պարտաւորեցնում իր ապրանքն ուրիշի վրայ չծախել՝ այն արդէն ծախւած հաշւելով, դոնէ մինչև պայմանաժամը լրանալը: Գնողն էլ կապւած է վաճառողի հետ իր կանխավճարով: Երկուսն էլ կարող են իրենց պայմանը քանդել. գնողը կզրկւի իր կանխավճարից յօգուտ վաճառողի. իսկ եթէ վերջինս է պայմանադանքը, նա ոչ միայն հոտ է դարձնում առած կանխավճարը, այլ նաև վճարում է միւս կողմին կանխավճարին հաւասար մի տուգանք: Բայց եթէ այդ պայմանաժամի ընթացքում, ապրանքը վաճառողի մօտ եղած ժամանակ արջառներից մէկը կամ մի քանիսը սատկին, կամ վաճառուին, շատ բնական է որ պատասխանատուն վաճառողն է. նա պէտք է կամ լրացնէ ապրանքը մի ուրիշով և կամ վաճառքի համապատասխան մասը թողնի անպահանջ: Կարող է պատահել, որ գնւած ամբողջ նախիրը կոտորւի, օրինակ մի էպիդեմիայի ժամանակ: Այս դէպքումն էլ, եթէ վաճառողն ուզում է հաստատ մնալ իր պայմանի վրայ, կամ նա պէտք է ըստ կռած պայմանի լրացնի պայմանագրի վաճառքի օրեկտը և կամ օրեկտի սնչանալու դէպքում քանուած պէտք է հաշւի պայմանն, ուստի և պիտի դաշնագիր հակառակ կողմին վերադարձնի՝ նրան հասանելի կանխավճարը (բէ՛): Նոյնն է և նշանագրութեան ժամանակ:

Այն դէպքում, եթէ նշանագրւած կողմերից մէկը հրաժարւի իր պայմանից, չի կարելի այժմ և չէր կարելի և հին ժամանակում որևէ դատարանի միջոցով հարկադրել, ինչպէս և որևէ ապրանք տուն, հող և այլն գնելիս, որ գնողն ու պայմանագիրը կողմը պահի իր պայմանն անխախտ, այսինքն, նշանածն իր նշանածն առնի և որևէ ապրանք գնողն իր ապրանքը տանի: Մի բան որ դատաւորն ու արարապետող սովորոյթը կարող են անել, այդ՝ կանխավճարի յօգուտ վճարողի թողնելն է:

Նշանագրւած կողմերից մէկի մահով, օրինակ աղջկայ մահ-

հով, վաճառման դաշնագրի օրեկտը դադարում է գոյութիւն ունենալուց, իսկ դա հաւասար է նոյն դաշնագրի ոչնչանալուն: Ըստ էութեան ոչնչացած այդ դաշնագրին ինքնին անարժէք է. բայց կողմերի ազատ կամքից է կախւած ոչնչացո՞ծ, գոյութիւն ունենալուց դադարած վաճառքի այդ օրեկտը փոխարինել մի ուրիշով, ճիշտ այնպէս, ինչպէս որ ոչնչացած արջառի տեղ նրա վաճառողը կարող է տալ մի այլը, նրան փոխարինել համարժէք օրեկտով, կողմերը, սակայն, եթէ չեն համաձայնիլ այդպիսի փոխարինութեան, նշանադրութեան դաշն ինքնին լուծւած է ու կողմերն ստանում են բաւարարութիւն: Այդպէս չէ, երբ նշանադրութիւնն արդէն ամուսնութիւն հաշւէր. այս դէպքում մէկի մահն առաջ կրելէր բոլորովին այլ իրաւական յարաբերութիւններ կենդանի մնացողի և մահացողի ժառանգութեան հանդէպ:

Այս դէպքերի մէջ եթէ նիսիօզան է կիրառւում, այն ժամանակ նա, որի հարսնացուն մեռել է, և որն իր հարսնացուի մեռնելուց յետոյ ամուսնանում է նրա քրոջ հետ, ճիշտ համար է ժառանգ յարուցանում, արդէօք իր առաջին հարսնացուի համար: Բայց սա միանգամայն անընդունելի է: Հարսնացուի քոյրն իր քրոջ մեռնելուց յետոյ վերջինս փեսացուին առնում է, իր հանգուցեալ քրոջ համար ժառանգներ չի ծնում և չի էլ կարող ծնել:

Այն հարսնացուն, որի նշանածը մեռել է, և որն առնում է իր մեռած նշանածի եղբօրը, պարտաւոր չէ և ոչ մի կերպ, ինչպէս վերին յիշածս դէպքում, վերջինս համար սերունդ յարուցանել: Այս հետևում է այն պարզ հանգամանքից, որ նշանածը մեռած հարսնացուն առնում է իր մեռած նշանածի եղբօրը ոչ թէ նրա համար, որ վերջինս իր մեռած նշանածի եղբայրն է, այլ նրա համար, որ պայմանագրի օրեկտի գոյութիւնը դատարելուց յետոյ նրան մի այլ օրեկտով են փոխարինել և նաև նրա համար որ փեսացուի մահուն պատճառով ոչնչացած պայմանը յիշածս ձևով վերանորոգելու պատճառով ինքը—հարսնացուն նոյն պայմանին իբր վաճառքի օրեկտը ծառայել է պարտաւորւած, նոյն պայմանագրին իր զօրութեան մէջ պահելու համար:

Ըստ այսմ որն էլ նշանածները կողմից մեռած լինի, իրաւական յարաբերութիւնները մնում են նոյնը:

Նիսիօզա ինստիտուտի գոյութիւնն առանց ամուսնութեան անհնար է. քանի որ նա գոյութիւն կարող էր ունենալ և առհասարակ ծագումն առնել միայն ու միայն ամուսնութեան ինստիտուտի ծագելուց ու կեանքի մէջ իբր իրաւական մի ինստիտուտ գոյութիւն ունենալուց յետոյ: Այս այսպէս լինելուց յետոյ, երբ նշանադրութիւնն ամուսնութիւն չէ, նշանածներից մէկի մահից

յետոյ չի կարող մի իրաւական յարաբերութիւն առաջ գալ, երբ այդ յարաբերութիւնն ինքը յատկանիշ է ամուսնութեան ինստիտուտի գոյութեան ու նրա լինելովն է միայն ծագում:

Նշանածներից մէկի մահւան հետ կապ ունեցած այդ երեւթեաներն ունին մի այլ աւելի ուշադրութեան արժանի պատճառ, քան նիսիօգա ինստիտուտն ինքն է՝ այս դէպքում:—Նշանածներից մէկի մահւան պատճառով նշանադրութեան դաշին քանտուելը կողմերից երկուսի համար էլ, նամանաւանդ փեսացուի համար, նիւթական զգալի, իսկ գլխական ժողովրդի համար նոյն իսկ ծանր, փասաներ է առաջ բերում: Երկու կողմերն էլ արել են ծախսեր, մէկը քիչ, միւսը շատ, այդ ծախսերը կկորչին ապաւորիւն կերպով: Թէ Հայերը, թէ Հնդկները եւ թէ ուրիշ ազգեր ակնյայտնի այդ ծախսերը զուր տեղը չկորցնելու համար, նշանադրութեան օրեկտներից մէկի մեռնելուց յետոյ նրան փոխաբնութում են մի ուրիշով: Նշանադրութիւնը մնում է նոյնը, նոր ծախսեր չեն լինում, որից շահուում են երկու կողմն ևս:

Մեզ թւում է թէ մեր առաջ դրած խնդիրը մենք կարողացանք բաւարար կերպով լուծել, ու ցոյց տալ, որ նշանածներից մէկի մահւան դէպքում նիսիօգա ինստիտուտը չի կիրառւում ու չի էլ կարող կիրառիլ:

§ 8.

ՏՆՓԵՍԱՅՈՒԹԻՒՆ (putrikaputra, die Erbtochterzuweisung).

Արիական ազգերի իրաւունքի մէջ աւելի ծանրակշիռ նշանակութիւն ունի, քան թէ նիսիօգա ինստիտուտը, ընդհանուր արիական patrika putra-ն, որ հայ իրաւունքի մէջ կոչւում է տղնփեսայութիւն: Եթէ ուրիշ շատ նշաններ էլ չունենար հայ իրաւունքը, կամ աւելի ճիշտն ասած, եթէ հայ իրաւունքը կորցրած լինէր իր արիական ծագումն ապացուցող շատ նշաններ, տնփեսայութեան ինստիտուտի գոյութիւնը բաւական էր, որ հայ ժողովրդի արիական ծագումն ունենալն ապացուցէր: Դա ապացոյց է նաև հայ ընտանիքի արեւակցական կազմակերպութիւն Parentel-system ունենալուն:

Տնփեսայութիւնն (patrikaputra-ն) արիական ազգերի այն իրաւական ինստիտուտն է, որի միջոցով արու զաւակ չունեցող հայրը իր աղջկայ միջոցով է իրեն ժառանգ յարուցանել տալիս: Սրանից

պարզ է, որ նիւթագ ինստիտուտի նման, սա էլ ժառանգ ունենալու համար կիրառւող մի միջոց է: Ըստ այդմ աղջկանից ծնւած զաւակը շարունակուում է ոչ թէ իր—աղջկայ, այլ աղջկայ հօր, այսինքն ծնւածի պապի սերունդն ու կրակաբանը:

Հայ ժողովրդի հասկացողութեամբ, ինչպէս տեսանք, արու զաւակը—որդին—կոչւում է «տան սիւն», ուստի և նրա ծնունդը ողջունւում է մեծ ուրախութեամբ. արու զաւակի ծնունդը հանգստացնում է հօրը և նրան ազատում մի ծանր հոգսից: Այդ հոգսը, ինչպէս մենք գիտենք, տան ու կրակաբանի և ցեղի շարունակութիւնն է: Դրա հակառակ, եթէ մէկին շարունակ աղջիկ է լինում, այն ժամանակ ծնողներն հաշւում են այդ համարեան անբախտութիւն, աղջկայ ծնունդը ծնողներին չի գոհացնում, բաւարարում, քանի որ աղջկայ միջոցով չի կարելի անմիջապէս հօր օճաղը շէն ու վառ պահել. այդ անելու համար պէտք է դիմել կողմնակի միջոցի—տնփեսայութեան:

Նոյն բանը հանդիպում ենք մենք նաև միւս բոլոր արիական ազգերի մօտ: Հնդկական իրաւունքի հին աղբիւրների մօտ մենք հանդիպում ենք հետեւեալ մտքին, ուր Veda-ն բացատրում է, թէ այն աղջիկը, որ եղբայրներ չունի, «անձնատուր է լինում տղամարդոց» (Rigveda, I, 124, 5). ¹⁾ Այս անձնատուր լինելը ոչ այլ ինչ է, եթէ ոչ հօր համար ժառանգ յարուցանելու համար յղանալու միջոց: Սկզբնականում աղջիկն այդ սեռական յարաբերութիւնները շարունակում էր, առանց որ նա ամուսնացած լինէր որևէ մէկի հետ, մինչև այնքան որ յղիանար: Այդ միջոցով ժառանգ ունենալու հոգացողութիւնն յետոյ դարձաւ մի ամբողջ ինստիտուտ, իրաւական իր խոշոր բնոյթով և հիմունքներով:

Դեռ այսօրւայ հայն էլ նոյն մտքով է տարւած, ու այսօրւայ տնփեսայութեան մէջ ապրում են հին իրաւաբանականութեան զօրեղ ապացոյցները: Այսօրւայ հայն էլ իր սերնդի շարունակելու ձգտմամբ տարւած, երբ նա միայն աղջիկ (կամ աղջիկներ) ունի, նրան ամուսնացնում է այնպէս, որ ոչ թէ աղջիկը հարս գնայ փեսի տունը, այլ փեսան պսակից յետոյ գայ իր աներոջ տունը: Հայն այդ անում է, որպէսզի ինչպէս ինքն է ասում, իր օճախը չմարի:

Կարող է այնպէս պատահել, որ արու զաւակ չունեցող հայրը մի քանի աղջկերք ունենայ. այս դէպքում, իհարկէ, նա չի կարող բոլոր աղջկներն էլ այդ ձևով ամուսնացնել: Այս դէպքումն էլ միայն մի տնփեսայ է մտցնում նա իր տունը, իսկ միւս աղջիկ-

1) Leist. Alt-arisches jus gentium եր. 108.

ներին ամուսնացնում է սովորական ձևով: Դուրս գնացող աղջիկներն իհարկէ ստանում են իրենց բաժինը: Տնփեսայութեան միջոցով ամուսնացած աղջիկը բոլոր արիական աղգերի մօտ, ինչպէս և դոցա թուում հայերի մօտ, լինում է հօր ընդհանրական ժառանգը (Universalerbin).

Տնփեսայ գնացող երիտասարդն ամուսնանալով եղբայրագուրկ մի աղջկայ հետ մնում է իր աներոջ տանը, մերում նրա ընտանիքի հետ և իր կնոջից ժառանգներ է յարուցանում, որոնք իրենց մայրական պապի (հանիի) ցեղն ու կրակաբանը վառ պահելու համար են: Ըստ էութեան մեծ տարբերութիւն կայ այն իրաւունքների մէջ որ ունի ամուսինն իր կնոջ և երեխաների նկատմամբ և կնոջ ու երեխաների ժառանգութեան վերաբերմամբ, և այն իրաւունքների՝ որ ունի տնփեսան իր կնոջ և երեխաների և նոցա ժառանգութեան նկատմամբ: Վերջին դէպքում նրա տնփեսի իրաւունքները սահմանափակւած են, նա լիակատար տանուտէր չէ: Բայց դա չէ՞ որ հակասում է հայկական տանուտիրութեան հիմնական սկզբունքներին: Սակայն այստեղ օգնութեան է հասնում ձեռք, որ հարթում է հակասութիւնը ու փրկում իրաւաբանական թիւնը ոտնահարելուց:—Ձեռք փրկում է էութիւնը:

Մեզ արդէն յայտնի է, որ տանուտիրութիւնն ենթադրւում է ընտանիքի, դրա մէջ և կնոջ, և ամբողջ տունուտեղի ստորադրելութիւնը՝ տանուտիրոջը. այդ ստորադրելութիւնը ձեռք է բերում dextrarum conjunctio-ի domum dequcto-ի և առաջին գիշերւոյ—առաջաստը մտնել ելնելու—միջոցով: Այս բոլորը սակայն իրագործումն են այն գնման դաշնի, որ տեղի է ունեցել երկու կողմի ծնողների մէջ նշանադրածների համար և նրանց կողմից: Բայց երբ տնփեսայութիւնն է գործում խօսք չի կարող հարմանալ մասին լինի, քանի որ փեսան հրաժարւում է իր հայրենի կրակաբանից և մտնում է հարսի հօր տունն և իր ապագայ սերնդով մերում է վերջինների մայրական պապի ընտանիքի հետ: Փետն մտնում է իր աներոջ տանուտէրութեան մէջ և շարունակում է նրա տանուտէրութիւնն իր որդոց միջոցով, և քանի վերջիններս դեռ անհափառաւ են, ի դէմս այդ որդիների: Այս առմամբ նրա դերը հասնում է միջնորդի դերին, նա դառնում է մի գործիք, մի միջոց որոշ նպատակի հասնելու համար. բայց նա է միևնոյն ժամանակ ամուսին և հայր. իսկ իբր այդպիսին, այսինքն իբր ամուսին ու տանուտէր, նա այդ իրաւունքը ձեռք է բերում ամուսնութեան միջոցով: Ամուսնութիւնը գլուխ է գալիս նշանադրութեան դաշնով, որ ոչ այլ ինչ է, եթէ ոչ առևտրական մի պայմանագիր, որով աղջկայ տէրը որոշ գնով և սկզբում հատուցած

կանխազնարով ծախում է իր աղջիկը փեսային: Այդ կանխազնարը հարմանացումն տրւած Նշանն է, մատանիքն ու քօղը: Որպէսզի տնփեսայութեան ժամանակ ըստ ձևի տնփեսան լինի զնման միջոցով աղջկան ձեռք բերող, նրա ձեռքն առնողը (հռոմայեցոց dextrarum conjunctio-ն է այս), կատարում է մի իսկական նշանադրութիւն, աղի կողմից աղջկայ գլխին քօղ է ձգում, մատանի դրւում և այլն: Այս ձևով արւած նշանադրութեամբ և աղջկայ ձեռքը զնկով, ըստ ձևի աղջիկը մտնում է փեսի ստորագրելութեան տակ:

Կարող է պատահել, որ թէ քօղը և թէ նշանադրութեան մատանին—կիւր զնկու այդ նշանները—զնած լինի աղջկայ հայրը, կարող է պատահել. որ հարսանեաց ամբողջ ծախսը արած լինին աղջկայ ծնողները, բայց այս բոլորը մազի չափ անգամ չեն փոխում զնման տկտի գոյութիւնը, տեղի ունենալը: Էական ըն յայն չէ, թէ ով է զնկ նշանի մատանին ու քօղը, այլ այն, որ նշանադրութեան դաշնը կնքելու համար հարկաւոր է մի կանխազնար, հարկաւոր է որ ամուսնացող աղջկայ վրայ Նշան դրւի, նրան քօղ ու մատանի յանձնւի:

Դժբախտաբար չենք կարող այստեղ երկար կանգ առնել տնփեսայութեան ինստիտուտի մանրազննին ուսումնասիրութեան ու նրա երևոյթների վերլուծութեան վրայ, քանի որ, մեր այս աշխատութեան վերնագիրն արդէն ցոյց է տալիս, որ սրա առաջին մասում Հայկական ընտանեկան իրաւունքի միայն իմնագրծերն ենք անցնելու: Ինչքան և համառօտ անցնինք այս խնդրի վրայով, այնուամենայնիւ տնփեսայութեան ինստիտուտի մի հիմնագիծը չենք կարող աչքաթող անել, դա ժառանգութեան խնդիրն է: Բայց նախքան թէ դրան կանցնենք տանք պատմական մի քանի տեղեկութիւններ այդ ինստիտուտի կիրառումից:

Հայ Արշակունիների ժամանակ ըստ սովորութեան, ինչպէս և հայ միւս նախարարութեանց մէջ, ցեղի միւս անդամները կին և տղամարդ, բաժին էին ստանում որոշ հողամասն և տուն ու այնտեղ բնակւում: Յեղի աղջիկն առնողը բնակւում էր նրա տան ու կալւածքի մէջ, նա տնփեսայ էր: Բերենք այս երկու տւեալը.—

1. ՏՐԴԱՌԱՌՄԻ անուն յազգէն Բագրատունեաց, որդի Սմբատունեայ, զստեր քաջին Սմբատայ, այր սրտեայ և ուժեղ, կարճ հասակաւ և զծով տեսեամբ, զոր իւր փեսայացոյց արքայ Տիրան ի դուստր իւր յերանիակա: Մ. Պոր. II 63.

Արշակունի իշխանազուններն ապրում և ժառանգութիւն էին ստանում Հաշտէնքում, Աղիովտում և Առքերանում, որ Մարաց հարեանութեամբ էին գտնւում: Այդ Տրդատը կնոջ ամբարտաւա-

նութիւնից. զայրացած, նրան ծեծում և շինքն զնայց ապստամբեալ ի կողմանս ամբուլթեանն Մարացո. անդ.

2. Արշակ Բ-ը հալածում է Կամսարականներին ու նոցա կոտորում, թէ մանուկներին և թէ կանանց: Եւս ոչ ոք ապրեցաւ ի նոցանէ, բայց Սպանդարատ որդի Արշաւրի. քանզի ունէր երկրորդ կին Արշակունի, որ և ընակեցաւ ի նորին ժառանգութեան ի կողմանս Տարօնոյ և Հաշտենից. III. 31.

Տնփեսայութեան մէջ, եթէ տնփեսան պակաս իրաւունքներ ունի իր աներոջ գոյքի նկատմամբ, նա ամուսնանալով լիակատար տանուտէր է դնման ակտի միջոցով ձեռք բերած կնոջ ու ամուսնու հանդէպ ու նրա կողքին: Նոյնն է նա իր որդոց նկատմամբ նաև իբր հայր: Տնփեսայ տանուտէրն իր նեղ ընտանեկան շրջանակում, իր կնոջ և որդոց համար բարձրագոյն դատողն ու վճռահատողն է, բայց նա իրաւագութիւն է նոցա մայրական ու իր կնոջ հայրական ժառանգութեան նկատմամբ: Նա իբր տանուտէր միայն կառավարում է իր կնոջ և որդոց այդ ժառանգութիւնը, նա հսկողն է բայց ոչ կարգադրողը: Նա կառավարում է այդ ժառանգութիւնը, բայց ոչ առանց աներոջ ընդհանուր հսկողութեան. ու երբ նա մեռած է, չի փոխւում և ոչ մի հանգամանք, ըստ ձևի նա երբէք կառավարողից չի դառնում կարգադրող: Աներոջ տեղը բռնում են նրա աղջիկն ու թոռները, այսինքն տնփեսայի կիներն ու որդիները: Կնոջ մահուան դէպքում նա ժառանգում է միայն ամուսնական գոյքը և այն ոչ լիովին—հայկական *lucra nuptialia*-ին կդառնանք իր ժամանակին—իսկ իր որդոց ժառանգութեան նկատմամբ, հայ տնփեսան ժառանգելով իր կնոջն իր որդոց հետ միասին, նա իր ժառանգական այդ իրաւունքի մէջ սահմանափակւած է. այդ ժառանգութիւնն ըստ էութեան իր որդիներինն է, նա տիրում և կառավարում է այդ ժառանգութիւնն իբր հայր, տնօրինում է նոցա անունից: Մի խօսքով տնփեսայ հայրն օգտւում է իր որդոց ժառանգութիւնից, ինչպէս և կնոջ ժառանգութիւնից իբր իւրն ու իւրայիններինը, բայց ինքնակամ տնօրինել—կարգադրել չի կարող:

Տնփեսայից ծագած ժառանգները կրում են ոչ իրենց հօր, այլ մայրական պապի ազգանունը, քանի որ նոքա վերջինս սերունդ ու կրակարանն են շարունակելու թէև պատահում է, որ այդ ժառանգները մնալով մայրական պապի տանը և շարունակելով նրա կրակարանը կրում են իրենց հօր ազգանունը: Նախընթաց ձևը, սակայն, պիտի հնազոյնը հաշւել, որ մենք պատահում ենք բոլոր արիւնքի մօտ:

Գէտք է ենթադրել, ինչպէս այդ միւս արիական ազգերի մօտ

է նկատուած, այնպէս էլ հայերի մէջ պէտք էր լինէր, որ արու գաւակից զրկուած հայրը տնփեսայ էր ընտրուած իր մերձաւոր ազգականներից. այս դէպքում գործում էր նաև ժառանգութիւնը ցեղի մէջ պահելու ձգտումը: Յետագայ ժամանակներում մեզ մօտ այդ բանն անհնար է հաս ու չհասական կանոնների խստացման պատճառով, ուստի և հայրը տնփեսայ է որոնում զբացիութեան մէջ: Նորագոյն ժամանակներում հայրը մեծ հաճութեամբ չի տալիս իր որդին տնփեսայ: յամենայն դէպս ունեւոր հայրն այդ մեծ դժարութեամբ կանի:

Քանի որ այսպէս ասած մայրիշխանութիւն ըստ էութեան զոյութիւն չի ունեցել ու չէր էլ կարող զոյութիւն ունենալ, ուստի և ձանձրոյթ յանձն չենք առնել հերքել, որ տնփեսայութիւնը զրա երեոյթներից մէկն է, իբր թէ: Տնփեսայութեան ինստիտուտի էութիւնը ցոյց տւեց, որ այդ կարծիքը միանգամայն տարամերժ է:

§ 9.

ՈՐԴԵՂՐՈՒԹԻՒՆ.

Որդեգրութիւնը նոյն միտքն ունի, ինչ որ ժառանգ ունենալու համար իր կնոջն ուրիշին յանձնելը և ինչ որ տնփեսայութիւնը: Որդեգրութեան միջոցով իր տունուտեղը շարունակել տալը դառնում է մի անհրաժեշտութիւն այն ժամանակ, երբ որեւէ ամուսին արու զաւակ չունի, միևնոյն ժամանակ չի դիմում նիսիօգա ինստիտուտին ու չի էլ ուզում որ իր աղջկան տնփեսի տալ և ոչ էլ ամուսնալուծութեան դիմել, երբ կինն էլ ամուլ է, կամ կողմերից մէկն անկար է:

Որդեգիրը մերում է որդեգրողի ընտանիքի հետ ու շարունակում վերջինի կրակարանն ու սերունդը: Ինչպէս բոլոր արիական ազգերի մօտ, այնպէս էլ նոցա թւում հայերի մօտ մարդ որդեգրում է իր մօտիկ ազգականներից մէկին. յետոյ սկսեցին որդեգրել նաև օտարների: Այդ ինստիտուտն այժմ համարեա թէ դադարել է միզանում գործելուց, այնքան որ որդեգրելու դէպքերը սակաւ են:

Այստեղ խիստ հետաքրքրական է յիշել որդեգրելու այն ձևը, որ պահած է եղել հայ ժողովրդի սովորութիւնների մէջ, և որը խոր հնութեան կնիք է կրում: Պօքս վերաբերւում է դեռ անցեալ դարի անաջին կիսում Աշտարակ գիւղում մէկին որդեգիր

վերցնելու ձևին: Ազգագրական այդ տեղեկութիւնը մենք քաղում ենք հայ վիպասան Պերճ Պօռնեանի մի վէպից: Յայտնի է թէ, Պօռնեան իր վէպերի մէջ ինչպիսի ազգագրական առատ նիւթ է մտցրել, որոնք մեծ ուշադրութեան են արժանի: Ըստ Պերճ Պօռնեանի տւած տեղեկութեան, մէկին որդեգրելու համար, որդեգրողի կինը վերցնում է որդեգրելու երեխան իր զոգնոցի տակ և ապա դուրս բերում, որով կատարւում է որդեգրելու ակտը:

Դրան կցում ենք հետեւեալ խորհրդածութիւնը միայն.—որդեգրածը պէտք է նկատւի իբր ծնեալ որդի, որդեգրողների արինից և մարմնից. բայց օտարից ծնածն ինչպէս կաւոյ է իբր այդպիսին նկատւել: Այստեղ դարձեալ օգնութեան է գալիս ձեռք, որ փրկում է էութիւնը: Այդ ձեռք հայ հին իրաւունքի մնացորդն է, ըստ այդմ որպէսզի որդեգրւած օտար տղան որդեգրողների մարմնից և արինից համարւի, որդեգրող մայրը որդեգրին ծնական է բերում իր առաջ, նրան առնում է իր զոգնոցի տակ, ապա սրբազան արարողութիւններից յետոյ դուրս բերում այնտեղից: Այլ կերպ ասած որդեգրողի կինը ձեռքնում է մի իսկական ծնունդ, որի նշանը որդեգրողին իր զոգնոցի տակն առնելն է: Այս ձեռականութեամբ դառնում է որդեգրւածն իբր արեամբ ծնւած զաւակ ու ձեռք բերում իսկական զաւակի բոլոր իրաւունքներն ու պարտաւորութիւններն, ինչ որ վերջին ունին իր հօր ու մօր ու նոցա տանուտեղի հանդէպ:

Այս առթիւ մանրամասն կանգ առնելն հաշւում եմ զուր. արեական այդ ինստիտուտի մասին համեմատութիւններ անելու համար ընթերցողի ուշադրութիւնը հրաւիրում եմ Յ. Կոլերի մի աշխատութեան վրայ, որ տպւած է Zeitschrift für vergleichende Rechtswissenschaft-ում, հատոր XVIII, երես 74 և այլն:

§. 10.

ԵԶՐԱՓԱԿՈՒՄՆ

Հայկական տանուտիրութեան մասին մեր հետազօտութիւնները տւին մեզ հետեւեալ եզրակացութիւններն անելու հնարաւորութիւնը:—

Ա. Հայկական ընտանեկան կազմակերպութիւնը, ինչպէս արեական մի ժողովրդի իրաւունքի հիմնական մի գիծ, ունի

նոյն նշանակութիւնն ու հիմունքներն, ինչ որ այդ բոլոր արեւելեան միւս ազգերի մօտ է դիտուած և ինչ որ նոյն իրաւունքի հիմնական դիմն է կազմում: Ըստ այդմ հայկական ընտանեկան կազմակերպութիւնն իր հիմունքներով նոյնանում է հին հնդկինների, գերմանների, սլաւների, հոմայեցոց (և այլն) համապատասխան հիմնարկութեան հետ:

Բ. Հայկական տանուտէրը հայրենական կրակարանին իր կնոջ գործակցութեամբ ծառայելով ձեռք է բերում աստուածների հովանաւորութիւնն իր տան վրայ, նա կառավարում է իր տունուտեղն իր ամուսնու և տանտիկնոջ, իսկ եթէ չափահաս որդիք ունի՝ նաև նոցա համագործակցութեամբ, նա ներկայացուցիչն է իր տան ու նրա տանուտէր իշխանը. նրա և նրա տան յարկի տակ հովանաւորութիւն են գտնում ոչ միայն աղքատները, հիւրերն, օտարականներն, այլ նաև նրա յարկի պաշտպանութիւնը որոնող ամեն ոք, ինչպէս նաև մի արեան թշնամի:

Գ. Որովհետև տան պահպանութիւնն ու կրակարանի շարունակելու հանգամանքը հոգևոր և աշխարհիկ մեծ նշանակութիւն ունի, ուստի և սերնդի շարունակութիւն մի մեծ անհրաժեշտութիւն է, քանի որ միայն դրա միջոցով կարելի է հայրենի ընտանեկան կազմակերպութեան գոյութիւնն ապահովել: Ըստ հայկական իրաւունքի հայրենական օճաղը կարող է շարունակել իսկապէս միայն հարազատ որդին, իրապէս իր հօրից սերածը. նա է որ պէտք է իր հօր հոգոյ հանգստութեան համար հարկաւոր սովորութիւնները կատարի, հոգոյ հաց տայ և այլն:

Դ. Հայ տանուտէրն ու հայրը չունի իր կնոջ վրա իբր ամուսին և իր որդոց վրայ իբր հայր իսկ ամբողջ տունուտեղի վրայ իբր տանուտէր անսահման իրաւունք և իշխանութիւն: Թէև նա իր կնոջը ձեռքէ բերում գնման ակտով, բայց հարսնաւից և առագաստից դուրս գալուց յետոյ՝ նոր ընտանիք և կրակարան հիմնելու ակտով նա—կինը դառնում է իր ամուսնու ընկերն ու գործակիցը: Նա է ծառայում ընտանեկան կրակարանին ու նրա մէջ անթեղն անշէջ պահելու մասին հոգում, կերակուր պատրաստում ընտանիքի համար և տան գործերը կատարում, և այլն:

Ե. Ըստ հայ իրաւունքի պատկանում են որդիքը ոչ միայն հօրը կամ մօրը, այլ երկուսին միաժամանակ, որ բղիթում է հայ իրաւունքի մէջ տանուտիրոջ և տանտիկնոջ (մարդու և կնոջ) իրահաւասարութիւնից: Նոյնն է նաև արեական այլ ազգերի մօտ: Հայ լեզու, ինչպէս և սլաւոնականը, պահպանել է հօր և մօր նկատմամբ մի ընդհանուր անուն. դա է ԾՆՈՂ բառը, ռուսերէն родитель. Մնել կարող է միայն մայրը, ու ծնելու ակտով որդին

պատկանում է միայն իր ծնող մօրը. բայց որովհետև ամուսնութեան ինստիտուտի միջոցով առաջ եկած զաւակները շարունակում են ոչ միայն մօր, այլ նաև գլխաւորապէս հօր տունտեղն ու կրակարանը, ուստի և հայ լեզուն ստեղծել է արտայայտութեան այդ ընդհանուր ձևը: Ընդհանուր արտայայտութեան այդ նշանը—ծնող այն միտքն է արտայայտում, որ իբր թէ հայրն էլ, ինչպէս և մայրը, ծնում է երեխային:

Դրանից է բղխում հայկական հին իրաւունքի այն գեղեցիկ իրաւաբանականութիւնը. որ երբ ամուսնալուծութեան ժամանակ դուրս գայ, որ կինն անմեղ է, ի միջի այլոց բաժանւում են կրկու ծնողների մէջ նաև որդիքը: Նայի՛ր այդ աւթիւ Շահապիվանի ազգային ժողովի (447 թ.) չորրորդ կանոնը: Նա ասում է թեթէ մէկն արձակէ իր կնոջը, որ որդոց մայր է, և որը ոչ մի արատ չունի, մարդը պարտաւոր է տալ իր կնոջը կէսն իր ունեցածի՝ հողի, ջրի, ամենատեսակ ստացւածքի և որդոց: Շահապիվանի օրէնսդիրը լաւ գիտակից է եղել հայրենի հին իրաւունքին, նրա ոգուն, ուստի և իր օրէնսդրական գործունէութեան մէջ ուղեցոյց է ունեցել ազգային իրաւունքի իրաւանորմերը:

Ծնողների իր որդոց վրայ հաւասար իրաւունք ունենալն ըստ ձևի և ըստ էութեան պահպանւած է նաև ամուսնութեան դէպքում նշանադրութեան ժամանակ, ինչպէս այդ ցոյց է տալիս նոյն Շահապիվանի եօթերորդ կանոնը: Ըստ ձևի պահանջւում է նշանադրւածների փոխադարձ համաձայնութիւնը, քանի որ փոխադարձ այդ համաձայնութեան վրայ է հիմնւում նոր տանուտիրութիւնն, որ երկուսն էլ իբր հաւասար կողմեր են մուտք գործելու:

Շահապիվանի ժողովի մի ուրիշ (երրորդ) կանոնում առանձնապէս շեշտւում է մի հանգամանք, որ ծնողների պատասխանատւութեան մի խոշոր կէտ է յօշափում և որը կապ ունի Անահիտի պաշտամունքի հետ: Այդ պաշտամունքի գոյութիւնն հայերի մօտ, ինչպէս կտեսնի իր տեղումն ընթերցողը, մենք մերժում ենք: Այդ կանոնն ասում է, եթէ մի կոյս աղջիկ իր կուսութիւնը պնակից առաջ կամովին զոհի իր փեսային՝ իր ապագայ ամուսնուն, դրա համար աղջկայ ճշայրն ու մայրը պատժի ենթակայ չեն: Սա բղխում է հայ իրաւունքի նորմերով ծնողների վրայ դրւած այն պարտաւորութիւնից, որն ասում է, թէ հայրն ու մայրը ոչ միայն պիտի հսկեն, որ իրենց աղջիկը մինչև պսակի օրը կոյս մնայ, այլ նաև պատասխանատու են դրա համար այն դէպքում, երբ պսակից առաջ խախտել է այդ կուսութիւնը՝ իբր հետևանք հսկողութեան պակասութեան:

Զ. Ինչպէս որ մասնաւոր մի տան մէջ ամուսին ու հայրը

տանուտէն է իր տունուտեղի և իւրաքանչիւր նախարար ու իշխան տանուտէն իր նախարարութեան ու դրա հետ միասին դրօշակիրն ու հրամանատարն իր գաւառի զինուորական ուժի, այնպէս էլ հայ ցեղական թագաւորը ամբողջ երկրի: Նա լինելով իր գաւառի տանուտէրը միաժամանակ տանուտէրն հայկական բոլոր գաւառների միութեան: Նա իր դրօշակի հետ միացնում է նախարարութեանց դրօշակներն ու դրանով դառնում է ամբողջ երկրի զինուորական ուժի ընդհանուր հրամայողն ու տնօրինողը: Նա իբր ընդհանրական տանուտէր միացրած լինելով իր ձեռքի տակ ամբողջ երկրը, տարածում է նրա վրայ իր հոգևոր կրօնական և աշխարհիկ իշխանութիւնը:

Է. Հիւրասիրութիւն, ողորմածութիւն և արեան վրէժ հայ ցեղական իրաւունքի գծերից են:

Ը. Որովհետև ամուսնութեան միջոցով իրագործւում է սերնդի և ընտանեկան կրակարանի շարունակութիւնը, ուստի և այդ ամուսնութիւնը հիմնւած պիտի լինի հայրենի օրէնքների համաձայն, այսինքն օրինաւոր պիտի լինի և ոչ լոկ կենակցութիւն: Ամուսնութիւնը պիտի լինի փոխադարձ հաւատարմութեամբ: Թէ արիական այլ ազգերի և թէ հայերի մօտ սակայն, տարբեր պահանջներ է դրւում կնոջ և տարբեր պահանջներ մարդու ամուսնական հաւատարմութեան նկատմամբ: Հնդկական հին օրէնքները թոյլ են տալիս հարճեր ունենալ. նոյնը պատահում ենք մինք յոյների, հռոմայեցոց և հայերի մօտ, թէև թէ յոյները, թէ հռոմայեցիք և թէ հնդկները միակին են: Հայ իրականութեան մէջ մենք դեռ այժմ էլ հանդիպում ենք օրինաւոր կնոջ հետ նաև այլ կնքեր պահելու սովորութեանը: Այդպիսի սովորութիւններ հանդիպում ենք մենք շատ գաւառներում. քայց այդ մասին իր տեղում:

Թ. Ուրդիքը կարող են ընտանեկան կազմակերպութիւնը շարունակել միայն այն ժամանակ, երբ նոքա հարազատ լինին, իրապէս իրենց հօրից ծագած, և ոչ թէ ամուսնական անկողնի անհաւատարմութիւնից: Այդպիսի որդիքը կոչւում են հարազատ ստիւր: Այն որդիքը, որ ծագել են անհաւատարիմ յարաբերութիւններից, նոքա ամուսնալուծութեան դէպքում անցնում են մօրը:

Ժ. Ինչպէս միւս արիական ազգերի մօտ, այնպէս էլ նոցա թւում հայերի մօտ, երբ ամուսնական և անկարգութեան պատճառով որևէ ամուսնութիւն զաւակներից զրկւած է, անզաւակ ամուսինը դիմում է նիկոգային և կամ որդեգրութեան ինստիտուտին. իսկ արու զաւակ չունենալու դէպքում տնփեսայութեանը (putrika putra, Erbtochterzuweisung). Սրանով վերջացրինք մենք առաջին մասը: